




ՅԱԲԵԼՈՒԱԾ ԳԱՀԻՐԷԻ ՀԲԸՄ-Ի «ՏԵՂԵԿԱՏՈՒ» ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ
ԹԻԻ 80, ՅՈՒԼԻՍ 2016


ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԻԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿ - ՏՆՕՐԷՆ
1908 - 1975



ՀԱՄԱԴՐԵՑ
ՊԵՐՃ ԹԵՐԶԵԱՆ




ԳԱՀԻՐԷ 2016





ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԻԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿ - ՏՆՕՐԷՆ








ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԻԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿ - ՏՆՕՐԷՆ
1908 - 1975


ՀԱՄԱԴՐԵՑ
ՊԵՐՃ ԹԵՐԶԵԱՆ

ԳԱՀԻՐԷ 2016



ԷԶԱԴՐՈՒՄ՝
Շահէ Լուսարարեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ՝
African Press - S.A.E.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մ Ո Ւ Տ Ք 7

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԵԼՈՒ ՁԵՒ ՄԸ 11

ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆ *Կենսագրական Նօթեր* 19

ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆ *Դաստիարակի մը խօսքերէն* 33

ԵՐԱՆՏԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ
Հայրենադարձ նախկին աշակերտներու կողմէ 41

ՄԱՍԼՈՅ ԱՐՁԱԳԱՆՁՆԵՐ ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆԻ ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵՆԷՆ

«Արեւ»ի անստորագիր լրատուութիւն
ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆԻ Քառասնամեայ Կրթական
Գործունէութեան Յորելինական Հանդիսութեան Առիթով 45

«Յուսաբեր»ի անստորագիր լրատուութիւն
ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆԻ Քառասնամեայ Կրթական
Գործունէութեան Յորելեանական Հանդիսութեան Առիթով 46

Գահիրէի Թեմական ժողովի անդամ
ԿԱՐԱՊԵՏ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ թղթակցութիւնը «ԱՐԵՒ»ին
ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆԻ Քառասնամեայ Ուսուցչական
Գործունէութեան Յորելինական Հանդիսութեան Առիթով 49

Գահիրէի Թեմական ժողովի անդամ **ՎԱՀԱՆ ՉԷՉՃԷՆԵԱՆԻ**
խօսքը **ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆԻ** Յորելեանին Առիթով 51

Գահիրէի Թեմական ժողովի ատենապետ
ԱՐԹՕ ՊԸԼԸՔՏԱՆԵԱՆԻ խօսքը Նուիրուած Վաստակաշատ
Յորելեար՝ **ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆԻ** 57

Աղեքսանդրիոյ Թեմական ժողովի անդամ
ՍՈՒՐԱՏ ՔԷՕՇԿԷՐԵԱՆԻ խօսքը **ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆԻ**
Յորելեանին Առիթով 61

Մ Ո Ւ Տ Ք

Եգիպտահայ հմուտ, նուիրեալ եւ վաստակաշատ դաստիարակ-
ունօրէն Տիգրան Պապիկեան 1975-ին կեանքէն կը բաժնուէր
վաղահաս մահով, իր ետին ձգելով հսկայ պարապ մը:

Այդ թուականէն մէկ տարի առաջ, 5 Մայիս 1974-ին, եգիպ-
տահայութիւնը պատշաճօրէն տօնեց իր կրթական գործունէութեան
քառասնամեայ յոբելեանը:

Յաջորդ էջերով (էջ 45-64) այդ տօնակատարութեան մասին
մամուլին մէջ եղած արձագանգներէն կարգ մը նմոյշներ
ներկայացուած են, ընթերցողին գաղափար մը տալու այն վարկին,
յարգանքին եւ զնահատանքին մասին զոր կը վայելէր յոբելեարը:

* * *

Անցեալ դարու 70-ական թուականներուն սկիզբը, Եգիպտոսի
կրթական նախարարութեան կողմէ հրատարակուած յաջորդական
որոշմնագրերու պարտադրանքով, Ազգային Իշխանութիւնը
ստիպուած 1972-73 ուսումնական տարեշրջանի աւարտին
հանգստեան կը կոչէր Տիգրան Պապիկեանը:

Սակայն միւս կողմէ զինք Առաջնորդարանին մէջ կրթական
հարցերու պատասխանատու կը նշանակէր, այն նախատեսութեամբ
որ որպէս փորձառու դաստիարակ՝ դասագիրքեր պատրաստէր մեր
դպրոցներուն համար:

Դժբախտաբար 1975-ի Սեպտեմբերին իր մահով այս ծրագիրը
անաւարտ կը մնար:

Իր մահուընէ յետոյ զրոյցներ կը շրջէին թէ ողբացեալը գրի
առնուած յուշեր ունէր: Երբ այս մասին իր ընտանիքին խօսուեցաւ,
կարելի չէղաւ յստակ պատասխան մը ունենալ:

1979-ին, մահուընէ չորս տարի ետք, «Արեւ»ի մէջ իր մասին
յօդուած մը կը գրէի (տեսնել էջ 11), անդրադառնալով յուշերուն
հարցին, յուսալով որ տեղէ մը ձայն մը կ'ելլէ այդ ուղղութեամբ:

* * *

Աւելի ուշ, իր ընտանիքին անդամները Քանատա արտագաղթեցին:

Երէջ որդին Եգիպտոս վերադարձաւ, իսկ կինն ու կրտսեր որդին Քանատա հաստատուեցան:

Հետագային կինը մահացաւ: Աւելի ուշ մահացաւ նաեւ կրտսեր որդին:

Քանատա հաստատուած, նախկին եգիպտահայ վաստակաւոր միութենական (ԹՄՄ) գործիչ Տիար Նուպար Պապիկեան, որ եղբոր որդին է ողբացեալ Տիգրան Պապիկեանի, յանձն առաւ Եգիպտոս մնացած իր զարմիկին հաշւոյն զբաղիլ Քանատայի մէջ մահացած կրտսեր զարմիկին թողօնին լուծարումին հարցով:

Տիար Նուպար Պապիկեանի հետ տասնամեակներու ծանօթութիւն ունենալով, իրմէ խնդրեցի որ ստուգէ, թէ իր յանձնաձած թողօնին մէջ Տիգրան Պապիկեանէն որեւէ յուշագրութիւն գոյութիւն ունի՞:

Տիար Նուպար հարկ եղած պրպտումը կատարելէ յետոյ, թղթածրար մը դրկեց, որուն մէջ կը գտնուէին քանի մը տրցակ ձեռագիր գրութիւններ, աւելցնելով, թէ միայն ատոնք էին իր գտածները:

Այդ գրութիւնները քննելով ի յայտ եկաւ Տիգրան Պապիկեանին ձեռագրով, երրորդ դէմքով խմբագրուած ինքնակենսագրական մը: Նոյնպէս, գտնուեցաւ «Դաստիարակի մը Խօսքերէն» խորագրով մտորումներու առանձին հատուածներ պարունակող թուղթերու տրցակ մը:

Ընթերցողը պիտի նկատէ թէ վերեւ յիշուած նիւթերը կապ չունին ակնկալուած յուշագրութեան հետ:

Հարկ է նշել թէ կենսագրականը որքանով որ կը ներկայացնէր Տիգրան Պապիկեանի կեանքին տարբեր հանգրուանները, նոյնքանով շահեկան մանրամասնութիւններ կը պարունակէր 1933-1970 երկարող տարիներու շրջանին եգիպտահայ ազգային վարժարաններու մէջ կրթական գործին հոլովոյթին մասին:

Այս պարագան եւս ներկայ գրքոյկը հրատարակելու մղում տուող պատճառներէն մէկն էր:

Տիգրան Պապիկեան 1925-ին, օրուան Ազգային Իշխանութեան կողմէ որպէս Եղիայեան սան, չորս այլ շրջանաւարտ դասընկերներու հետ Ֆրանսա կը դրկուէր իր բարձրագոյն ուսումը ստանալու:

Ի տարբերութիւն իր դասընկերներուն, Պապիկեան Ֆրանսա կը մնար 8 տարի եւ կ'աւարտէր բարձրագոյն կրթութեան երկու հիմնարկներու դասընթացքները:

Այս երեւոյթը ինքնին կը յուշէ թէ Եգիպտահայ համայնքին պատասխանատուները մեծ յոյսեր դրած էին իր վրայ:

Արդարեւ, ան իր ուսումը աւարտելէ յետոյ Եգիպտոս վերադարձին կ'արդարացնէր այդ յոյսերը, կրթական ասպարէզին նուիրուելով եւ որոշիչ դեր ունենալով ազգային վարժարաններու ուսումնական մակարդակը հետզհետէ նախանձելի վիճակի մը հասցնելու մէջ:

Հակառակ այս իրագործումներուն, իր կրթական գործունէութեան մասին գոյութիւն չունի համապարփակ բովանդակութեամբ հատոր մը:

Այս ուղղութեամբ բացառութիւն կարելի է համարել Արտաշէս Գարտաշեանի հեղինակած գիրքը՝ «Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան համար» (Բ. հատոր Վենետիկ 1986), ուր Գահիրէի Գալուստեան Ազգային Վարժարանի տնօրէններուն մասին տրուած տեղեկութիւններուն շարքին, Տիգրան Պապիկեանի մասին եւս տրուած են կենսագրական հակիրճ տուեալներ:

Այնպէս կը թուի թէ ներկայ գրքոյկին մէջ ներկայացուող կենսագրականը պատրաստուած է 1974-ին, իր քառասնամեայ կրթական գործունէութեան յրբելեանին առիթով:

Այս ենթադրութիւնը կ'ընենք հիմնուելով այն իրողութեան վրայ, որ յրբելիական հանդիսութեան առիթով գրեթէ բոլոր ելոյթ ունեցողները, իրենց խօսքին մէջ նոյնութեամբ գործածած են կենսագրականէն առնուած բազմաթիւ բառակապակցութիւններ:

Այսքանը ինչ կը վերաբերի կենսագրականին:

Գալով «Դաստիարակի մը խօսքերէն» բաժինին, հոն տեղադրուած մտորումներու առանձին հատուածները կրնան պատկանիլ Տիգրան Պապիկեանի գրիչին կամ ուրիշին:

Սակայն երկու պարագաներուն ալ անոնց ամբողջութիւնը գաղափար մը կու տայ ազգային-կրթական ասպարէզէն ներս իր ունեցած մօտեցումներուն և համոզումներուն մասին:

Այս բաժինն նիւթերը խմբուած են երեք գլուխներու տակ, յաջորդաբար՝ աշակերտներու ուղղուած խօսքեր, ուսուցիչներու ուղղուած խօսքեր և ընդհանուրին ուղղուած խօսքեր:

Ասոնցմէ զատ կար 22 Ապրիլ 1974 թուակիր երախտագիտական ուղերձ մը, ստորագրուած հայրենադարձ իր նախկին աշակերտներուն կողմէ: Այս ուղերձը պատրաստուած է եւ ուղարկուած Գահիրէ, 5 Մայիս 1974-ին հոն կայացած իր քառասնամեայ կրթական գործունէութեան յոբելինական հանդիսութեան առիթով: Ուղերձին բովանդակութիւնը յստակօրէն կ'արտացոլէ իր աշակերտներուն ունեցած խոր սէրը, յարգանքը և երախտագիտութիւնը իրեն հանդէպ:

Վերեւ նշուած Գանատայէն «վերադարձած» երեք նիւթերուն վրայ եթէ աւելցնենք իր քառասնամեայ յոբելեանին առիթով մամուլին մէջ եղած արծագանգներէն կարգ մը նմոյշներ, որոշ չափով ներկայացուած պիտի ըլլայ Տիգրան Պապիկեանի զատորոշ կերպարը:

Մաղթենք որ ներկայ համեստ ձեռնարկը մասամբ դարմանէ, եզրփոխահայութեան մէջ երկար եւ բեղուն գործունէութիւն ունեցած այս կրթական գործիչին մասին յատուկ հատորի մը բացակայութիւնը:

Պերճ Թէրզեան

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԵԼՈՒ ՁԵՒ ՄԸ

Երեսունհինգ տարիներ առաջ էր:

Գալուստեան մանկապարտէզի մեր ուսուցչուհին օր մը մեզի յայտնեց թէ դասարանին լաւագոյն ձեռային աշխատանքները Պր. Տնօրէնին պիտի ներկայացուին: Ապա մեզի բաժնեց խաւաքարտի վրայ գունաւոր դերձանով շրջագծուած նկարներ, որոնք մեր գունաւոր մատիտներով սկսանք մանկական խանդավառութեամբ ներկել:

Վերջապէս հասաւ սպասուած օրը: Ուսուցչուհին ընտրած էր երեք լաւագոյն ձեռային աշխատանքները:

Իմ ներկած նկարս, որ զոյգ մը պանան կը ներկայացնէր, շատ յաջող չէր: Բայց ուրիշ դասերու մէջ յառաջադէմ ըլլալուս, ուսուցչուհին զիս ալ միացուց «բախտաւոր»ներու խմբակին:

Մեր փոքրիկ քայլերով ուսուցչուհին հետ բարձրացանք վարժարանին մայր շէնքին մէջ գտնուող տնօրէնութեան սենեակը:

Տնօրէնը մեզ ընդունեց ժպիտով եւ քաջալերական քանի մը խօսքեր ընելէ ետք, սկսաւ մի առ մի քննել ներկայացուած ձեռային աշխատանքները:

Երբ կարգը ինծի եկաւ, յօնքերը վեր առնելով ակնոցին ետեւէն յարեց.

- Քու պանաններդ քիչ մը խակ կ'երեւին:

Ու սկսաւ խնդալ իրեն յատուկ դանդաղ ու կտրտուած խնդուքով:

Կը զգայի թէ թուխ դէմքս մինչեւ ականջներս կարմրած էր ու կրակ կտրած:

Տիգրան Պապիկեանին հետ առաջին հանդիպումս էր:

* * *

Մանկապարտեզն յետոյ ուրիշ վարժարան յաճախեցի:

Տարիները թաւալեցան եւ օր մըն ալ ինքզինքս գտայ, ժողովներու մէջ, իր կողքին նստած:*

Առիթ ունեցայ իր մէջ հայ դաստիարակը աւելի մօտէն ճանչնալու:

Իր մօտ զգալի էր գուրգուրանքն ու սէրը աշակերտութեան հանդէպ:

Բացառիկ խնամքով ու ջանասիրութեամբ կը պահէր Եղիայեան Սանուց Ֆոնտին եւ ՀԲԸՄ-ի Յովակիմեան Սաներու ցանկերը:

Մօտէն կը հետեւէր իւրաքանչիւր սանի աշխատանքներուն, խղճմտօրէն կ'ուսումնասիրէր իրենց պայմանները ու կը հետեւէր ուսումնական արդիւնքներուն: Պէտք էր տեսնել այն անսահման հրճուանքը, որ կը ճառագայթէր իր դէմքին վրայ ամէն անգամ որ աշակերտ մը փայլուն արդիւնքներ ձեռք բերէր:

Անզիջող էր աշակերտութեան տոհմիկ եւ հայեցի դաստիարակութիւն ջամբելու հարցին մէջ: Այս մասին իր արտայայտութիւնները լեզուի տուրք չէին, այլ՝ գործնապէս կիրարկուող մեթօտներ:

Դաստիարակ մըն էր բառին ամբողջական առումով:

Հետամուտ էր միշտ սորվելու եւ սորվեցնելու:

Գիրքը անպակաս էր իր ձեռքէն, միշտ կը կարդար ու կը պրպտէր, նորութիւններ յայտնաբերելու ու զանոնք փոխանցելու մտահոգութեամբ:

Ուսումին չափ կարեւորութիւն կ'ընծայէր նկարագրի կազմութեան եւ միշտ շեշտը կը դնէր ազգայինին վրայ անպայման:

Երբ աւելի քան քառասուն տարուան կրթական ծառայութենէ մը

**1964-ին իր հետ անդամ նշանակուած ենք ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Կեդրոնական (հետագային Շրջանակային) Յանձնաժողովին: Նոյնպէս անդամակցած են իր գլխաւորած Ուսումնական Խորհուրդին եւ Եղիայեան Սանուց Յանձնախումբին:*

ետք հանգստեան կոչուեցաւ, ծրագրած էր տարիներու իր փորձառութեան լոյսին տակ դասագիրքերու շարք մը պատրաստել:

Անողորք հիւանդութիւնը, սակայն, զինք զգետնեց:

Յարգանքով եւ երախտագիտութեամբ կը յիշէր Քալուստեան Ազգային Վարժարանի իր երբեմնի տնօրէնը՝ ՀԲԸՄ-ի վաստակաշատ ընդհանուր տնօրէն Գրիգոր Կիրակոսեանը:

Իր հիւանդութեան շրջանին այն միակ անգամուն երբ առիթ ունեցայ իրեն այցելելու, հետո տարի այդ ժամանակ նոր մահացած Գրիգոր Կիրակոսեանի նուիրուած «Յուշարար»ի թիւը:

Հակառակ իր հիւանդութեան պատճառած ցաւերուն, մեծ բաւականութեամբ թղթատեց այդ թիւը: Աչքերը արտասուքով լեցուեցան երբ նկարներուն մէջ սկսաւ դիտել հին եւ սիրելի դէմքեր:

Վերյիշեց թէ ինչպէս իր տնօրէնը քաջալերած էր զինք կրթական ասպարէզին նուիրուելու:

Պատմեց թէ ան հօր մը նման կը մղէր իւրաքանչիւր աշակերտ իրեն յարմար ասպարէզը ընտրելու: Շատ չանցաւ, սակայն ինք ալ գնաց միանալու իր սիրելի տնօրէնին:

Ատիկա եղաւ մեր վերջին հանդիպումը:

Ճիշդ է որ Տիգրան Պապիկեան իր ողջութեան արժանացաւ մեր գաղութի յարգանքին ու գնահատանքին:

Արդարեւ, Գահիրէի Ազգային Իշխանութեան կազմակերպութեամբ հրապարակային հանդիսութեամբ մը արժանավայել կերպով նշուեցաւ իր կրթական քառասնամեայ գործունէութեան յոբելեանը:

Այս օրերս կը զուգադիպին իր մահուան չորրորդ տարելիցին:

Անցնող չորս տարիներուն ի՞նչ աշխատանք տարուած է քառասուն տարիներ այս գաղութին ծառայած կրթական մշակին յիշատակը պահպանելու համար:

Վերջերս, Եգիպտահայ Ուսուցիչի Օր անունով ձեռնարկի մը առիթով բանաւոր եւ գրաւոր հրապարակային ելոյթներ տեղի

ունեցան, բազմաթիւ հին ու նոր անուններ յիշուեցան, բայց մոռցուեցաւ իր անունը:

Հեռաւոր անցեալին քանի մը տարի ուսուցչութիւն ըրած ու շատոնց մահացածներու անունները մամուլին մէջ «ճշդում»ներով յիշուեցան, բայց աւելի քան երեք տասնամեակներու մեր ազգային վարժարաններուն տնօրէնին եւ կոչումով ու պատրաստութեամբ ուսուցիչին անունը մոռցուեցաւ կամ մոռացութեան տրուեցաւ:

Տիգրան Պապիկեանի մահուընէ ետք Գահիրէի Ազգային Իշխանութիւնը, իբր յետ մահու նուազագոյն յարգանքի արտայայտութիւն, ձեռնարկեց շիրիմի մը կառուցման նախնական աշխատանքներուն:

Հանգուցեալին ընտանիքը, դժբախտաբար եւ ցարդ անհասկնալի պատճառներով, արգելք հանդիսացաւ այս ձեռնարկին:

Եգիպտահայ գաղութի երկարամեայ այս երախտաւորը ըստ երեւոյթին դատապարտուած է անշիրիմ մնալու:*

Լսած ենք նաեւ որ հանգուցեալը գրի առած է իր յուշերը:

Այդ յուշերուն հրատարակութիւնը հաւանաբար շատ լոյս սփռէ եգիպտահայ գաղութի կրթական կեանքին պատմութեան երկար մէկ շրջանին վրայ եւ կրնայ առատ նիւթ հայթայթել ապագայ պատմաբանին: Արդարեւ, Տիգրան Պապիկեան առաջնորդող դէմք մըն էր այդ մարզէն ներս երկար տարիներ շարունակ:

Տարելիցի մը առիթով թերեւս աւելի անուշ խօսքեր կը սպասուէին:

Սակայն երբեմն դառն իրականութիւնը ըսելը եւ լսելը աւելի անուշ է, քան՝ կեղծ պատշաճութիւնները յարգելը:

Տիգրան Պապիկեանի յիշատակը որքան որ սեփականութիւնն է իր ընտանիքին, նոյնքան եւ աւելի սեփականութիւնն է այս գաղութին, ինչպէս նաեւ աշխարհացրիւ իր բազմահազար աշակերտներուն:

Բազմամեայ կրթական այս մշակին հանդէպ յարգանքի

*Հետագայ տարիներուն պատշաճ շիրիմ մը շինուած է:

հաւաքական պարտականութիւններ ունինք, որոնցմէ առաջին գիծի վրայ կու գայ իր յուշերուն հրատարակութիւնը, եթէ ոչ գիրքի՝ գոնէ թերթօնի ձեւին տակ:

Մահուան չորրորդ տարելիցին իր յիշատակը յարգելու եւ մեր երախտագիտութիւնը յայտնելու յարմարագոյն ձեւը կրնայ ըլլալ ասիկա:

Պերճ Թէրզեան

«Արեւ» օրաթերթ, 1 Հոկտեմբեր 1979

**ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԻԱՆ
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ**

ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԻԱՆ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Ծնած է Կոստանդնուպոլիս, 1908-ին, Օգոստոս 17-ին, Աստ-
լածածնայ տունին օրը:

Կրտսեր որդին բնիկ վասպուրականցի ծնողներու՝ Միսաք
Ասատուր Պապիկեանի և Անթառամ Մանուկեանի:

1913-ին ընտանեօք կը հասնի Եգիպտոս, ուր հայրը արդէն իսկ
գործով հաստատուած էր 1911-էն ի վեր:

ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ ԳԱՆՈՒՍՏԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

Մանուկ հասակէն կ'աշակերտէ Գալուստեան Վարժարանի
Մանկապարտէզի բաժնին, զոր կը վարէր ծանօթ մանկավարժուհի
Օրիորդ Մաքրուհի Թաշճեան (հետագային Թաշճեան Վարժարանի
հիմնադիրը) տնօրէն Յովհաննէս Գայաեանի օրով:

Նախակրթութեան վերջին տարիներուն Գալուստեան Վար-
ժարանէն ներս հետզհետէ մուտք կը գործէ պոլսահայ ծանօթ
մտաւորականներու փառանգ մը, որոնց շունչին վարակիչ
ջերմութիւնը խանդավառութեամբ կը լեցնէ նոյն տարիներու
պատանի սերունդը, արթնցնելով անոր մօտ անսովոր եռանդ
ուսման հանդէպ առհասարակ և ազգային գիտակցութիւն՝
մասնաւորաբար:

Բազմակողմանի հմտութեամբ օժտուած անձնաւորութիւն մըն էր
այդ շրջանի տնօրէնը՝ Պր. Գրիգոր Կիրակոսեան (հետագային
տնօրէն Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան,
Կալկաթայի Հայ Ճեմարանին և ապա ընդհանուր Տնօրէն Հ.Բ.Ը.
Միութեան): Անոր իմաստուն թելադրութեամբ և օրուան Առաջնորդ
երջանկայիշատակ Թորգոմ Արք. Գուշակեանի կարգադրութեամբ,
վարժարանին ուսուցչական կազմին մաս կը կազմեն Յակոբ
Օշական, Արշակ Ալպոյաճեան, Գարեգին Տիրկէրեան, Բիւզանդ
Կէօզիւպէօյիքեան, Լեւոն Թաշճեան, Տիկին Զարուհի Ծաղկունի,
Ղազարոս Ղազարոսեան, բոլորն ալ իրենց կրթական վաստակովը
արդէն իսկ համբաւի տիրացած:

Գալուստեան Վարժարանը այդ տարիներուն կ'ապրի
աննախընթաց վերելքի շրջան մը (1922-1927):

Այդ շրջանին է որ, 1924 Յունիսին, Տիգրան Պապիկեան շրջանաւարտ կը հանդիսանայ «փայլուն» գնահատականներով, իրեն դասընկեր ունենալով ի միջի այլոց, Համբարձում Գարատեան (հետագային ծանօթ հասարակական գործիչ), Գառնիկ Զուլումեան (աշխարհահռչակ նկարիչ Գառզուն), Նորայր Գուրեան (հետագային հիմնադիր տնօրէններէն Հելիոպոլսոյ Նոր Ճեմարանին և կարճ շրջան մըն ալ ուսուցիչ Գալուստեան Վարժարանի), Տիկին Վիքթորիա Յովսէփեան (Օրիորդ Գալֆայեան), հետագային երկարամեայ սիրուած և յարգուած մանկապարտիզպանուհի Գալուստեան Վարժարանի և Մոնթէլալի շաբաթօրեայ Վարժարանի տեսչուհի), Տիկին Իսկուհի Տատրեան (Օրիորդ Գոճանեան), հետագային Ֆրանսերէնի ուսուցչուհի եգիպտական վարժարաններու և կարճ շրջան մըն ալ տնօրէնուհի Գալուստեան վարժարանի):

Օրուան Ազգային Իշխանութիւնները, Թորգոմ Ս. Առաջնորդ Հօր գլխաւորութեամբ, իմաստուն կարգադրութեամբ մը և գաղութիս ազգային-կրթական ապագային համար լաւագոյն և հաստատ հիմեր ապահովելու հեռատես մտածումով կը փութան ուսումնաստենչ և խոստմնալից աշակերտներէն խումբ մը ընտրելով Եւրոպա ուղարկել՝ մանկավարժական մասնագիտութեամբ օժտելու համար զանոնք:

Շնորհիւ բարեյիշատակ բարերար Գրիգոր Եղիայեանի հիմնած ուսումնական ֆոնտին, ընտրուած հինգ պատանիներ, Գահիրէի ֆրանսական «Լիսէ»էն ներս տարի մը պատրաստուելէ վերջ կ'ուղարկուին Ֆրանսա, 1925-ի Հոկտեմբեր 9-ին: Տիգրան Պապիկեան մէջն էր այդ հինգ ընտրեալներուն:

Ողջերթի հանդիսաւոր արարողութիւն մը տեղի կ'ունենայ (7-10-1925ին) Պէյն Էլ Սուրէնի Ս. Աստուածածին Եկեղեցիին կից, Առաջնորդարանի դահլիճին մէջ, ուր երջանկայիշատակ Թորգոմ Սրբազան, իրեն յատուկ առինքնող ոճով, ներհուն յորդորականով մը գրահելէ վերջ այդ պատանիներու մատաղ հոգիները՝ յաջողութեան և բարի վերադարձի մաղթանքներու զեղումով ողջերթի խօսքեր կ'արտասանէ՝ բոլոր ներկաներուն յուզումնալից ակնարկներուն առջեւ:

ԵՂԻԱՅԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄՔԻՆ ԱՆՂԱՄՆԵՐՆ ԷՆ՝

Տնօրէն Գրիգոր Կիրակոսեան

Փրոֆ. Տիրան Պէլլէրեան (եգիպտական համալսարանի դասախօս)

Պր. Գրիգոր Դարբինեան (հետազային Թեմական ժողովի փոխ ատենապետ)

Մեթր Շաւարշ Սեւօնքեան (եգիպտահայ ծանօթ հասարկական գործիչ)

Պր. Յովհաննէս Սէքսէնեան (եգիպտահայ ծանօթ ազգային)

Իսկ օրուան Քաղաքական ժողովի ատենապետն էր Տոքթ. Սարգիս Ժամկոչեան:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐ

Այնուհետեւ կը սկսին ուսումնական լայն ու բազմակողմանի պատրաստութեան մը տարիները Էքս-ան-Բրովանսի (Aix-en-Provence) ուսուցչանոցէն ներս (Էքօլ Նորմալ):

Հետզհետէ տիրապետելով ֆրանսերէնի նրբութիւններուն, Տիգրան Պապիկեան անսպառ ու անյագ հետաքրքրութեամբ կը հետեւի յատկապէս գրականութեան, պատմութեան, հոգեբանութեան և մանկավարժութեան դասընթացքներու, վայելելով իր տնօրէնին և բոլոր դասախօսներուն ջերմ համակրութիւնն ու հոգածութիւնը իբրեւ միակ օտարական ուսանողը այդ պատկառելի հաստատութենէն ներս:

Նոյն տարիներուն ձեռք կը բերէ մեծ փորձառութիւն երկար ամիսներ պարբերաբար դասաւանդելով Ուսուցչանոցին կից տիպար վարժարաններու ֆրանսացի աշակերտներուն:

Փայլուն յաջողութեամբ աւարտելէ վերջ ուսուցչանոցի շրջանը, Տիգրան Պապիկեան կը շարունակէ իր ուսումնական աշխատանքները մասնագիտանալու համար գիտութեան և մաթեմաթիկայի ճիւղերուն մէջ, Մարսիլիոյ Գիտական Համալսարանէն ներս, ուրկէ կը վկայուի յատկապէս բնագիտութեան տարրաբանութեան և բնական գիտութիւններու ճիւղերուն համար:

Ուսանողական իր տարիներուն Տիգրան Պապիկեան ինչպէս և իր ընկերները, կը վայելեն ջերմ հոգածութիւնը Դպրոցատէր Տիկնանց Միութեան Պատուարժան Տնօրէնուհի Տիկին Սուրատի և հարա-

ւային Ֆրանսայի Առաջնորդ երջանկայիշատակ Գրիգորիս Եպս. Պալաքեանի:

ԿՐԹԱԿԱՆ-ՂԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ Ա. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

1933 Սեպտեմբերին սկիզբ կ'առնէ իր «Ալմա Մաթեր»-էն՝ Գալուստեան Վարժարանէն ներս ուսուցչական և տեսչական երկարամեայ գործունէութիւնը, որ կը տեսէ մինչեւ 1961-ի Սեպտեմբեր ամիսը:

Անտեսելով Մելգոնեան հաստատութենէն բազմիցս եղած հրաւերները, ինչպէս նաեւ տեղւոյս պետական երկրորդական վարժարանէ մը եղած հրաւերը, Տիգրան Պապիկեան կը նուիրուի ուսուցչական իր նախասիրած ասպարէզին, ողբացեալ Լեւոն Թաշճեանի տնօրէնութեան օրով: Յաջորդ տարեշրջանին իսկ, (1934-1935) Ազգային Իշխանութեան կողմէ կը նշանակուի եռանդամ Տեսչական Մարմին մը վարժարանին համար, ուր Յակոբ Նալբանտեանի և Ազարիկ Գոլոյեանի կողքին՝ Տիգրան Պապիկեանի կը վստահուի վարժարանին ուսումնական բաժնի ամբողջական պատասխանատուութիւնը:

Այդ տարեշրջանին է որ Գալուստեան Ազգային Վարժարանի դիմագիծը հիմնական բարեփոխութեան կ'ենթարկուի և վարժարանը կը մտնէ նոր հունի մէջ: Մանկապարտէզի երեք կարգերէն վերջ յստակօրէն կ'անջատուի նախակրթարանի բաժինը վեց կարգերով, որուն վրայ կ'աւելնան բարձրագոյն նախակրթարանի երեք կարգեր, իւրաքանչիւր բաժինը իր ուրոյն վկայականով:

-1936-39 տարեշրջաններուն բարձրագոյն կարգերու աշակերտութիւնը կը պատրաստուի ֆրանսական «Պռըվէ»ի պաշտօնական քննութեանց, նոյն ատեն հետեւելով հայ գրականութեան, մատենագիտութեան, գրաբարի, ազգային և եկեղեցական պատմութեան, ձեռք բերելով բաւական լուրջ պատրաստութիւն մը:

Նոյն շրջանի շրջանաւարտները տեղւոյս «Լիսէ»ներէն ներս աշակերտելով կը յաջողին ստանալ ֆրանսական «Պաքալորէա»ի վկայականը իր երկու բաժիններով:

-1942-43 տարեշրջանին, տնօրէն Լեւոն Թաշճեանի անակնկալ մահէն վերջ (Դեկտ. 1942) իր ուսերուն վրայ կ'առնէ վարժարանին ընդհանուր տնօրէնութեան պատասխանատու պաշտօնը, զոր կը վարէ մինչեւ Օգոստոս 1961, այսինքն լման 19 տարիներ:

-1939-1956 տարիներուն, Բ. Աշխարհամարտի ստեղծած պայմաններուն բերումով, վարժարանին բարձրագոյն կարգերուն համար կը մշակուի անգլիական General Certificate of Education-ի (G.C.E.) քննութեանց պատրաստուելու ուսումնական ծրագիր մը: Այդ շրջանի մեր շրջանաւարտներէն շատեր տեղւոյն Ամերիկեան Համալսարանի «Ֆրէշմէն» կարգը կ'ընդունուէին անմիջապէս և անոնցմէ շատեր՝ B.A. կամ B.Sc. վկայականին կ'արժանանային միայն չորս տարիներու կանոնաւոր դասընթացքէ մը վերջ:

-1956-էն յետոյ, Եգիպտոսի Յեղափոխութեամբ ստեղծուած նոր կարգերով, վարժարանին ուսումնական ծրագիրը, կրթական իշխանութեան հրահանգով, (կրթական օրէնք թիւ 583) կը պատշաճեցուի պետական համապատասխան վարժարաններու ծրագրին և այդ շրջանէն ի վեր Գալուստեանի բարձրագոյն նախակրթարանի աշակերտները կը ներկայանան «Ատատիա»ի պետական քննութեանց:

-1945-1949 տարեշրջաններուն Գալուստեանը վերածուեցաւ Երկրորդական Վարժարանի, յաւելուածական 2 կարգերով, իբրև ուսումնական ծրագիր ունենալով Ֆրանսական Պաքալորիա ծրագիրը: Նոյն այդ շրջաններուն ունեցանք շրջանաւարտ 10 աշակերտներ, որոնց մեծ մասը իր մասնագիտական ուսումը շարունակեց ստանալ մայր հայրենիքի մէջ, ոմանք ալ Փարիզի բարձրագոյն կրթական հաստատութիւններուն մէջ:

ՂԱՍԱԻԱՆԴԱԾ ՆԻԻԹԵՐ

Գալուստեան Վարժարանէն ներս Տիգրան Պապիկեան անընդհատ դասաւանդած է գիտութիւն, ֆրանսերէն և հոգեբանութիւն: Այս նիւթերը ֆրանսերէնով աւանդած է այն շրջանին, ուր բարձրագոյն կարգերէն ներս ծրագիրը այդ կը պահանջէր: Իսկ Նուպարեան Վարժարանին մէջ գիտութիւն, աշխարհագրութիւն և հայերէն:

ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆԻ ՊԱՏՐԱՍՏԱԾ ՂԱՍԱԳԻՐՔԵՐՈՒ ՑԱՆԿԸ

Մինչեւ 1933-35 տարիները մեր ազգային վարժարաններէն ներս կը գործածուէին Պոլիս հրատարակուած դասագրքեր: Սակայն հետզհետէ, քաղաքին և նաեւ ուսումնական ծրագիրներու փոփոխութեանց պատճառով, անոնք նպատակայարմար ըլլալէ

դադրեցան:

Տիգրան Պապիկեան քաջալերեց զանազան նիւթեր ուսուցանող մեր ուսուցիչներէն ամենէն փորձառուներն ու ձեռնհասները, որպէսզի նոր ծրագիրներ պատրաստեն ու աշխատանքի լծուին (Լեւոն Աճէմեան, Առաքել Տրդատեան, Բենիամին Թաշեան, Եւայլն):

Նոյն ատեն ինք եւս հետզհետէ կը պատրաստէ և գործադրութեան կը դնէ հետեւեալ դասագիրքերը:

Գիտութեան դասագիրք Նախակրթարանի Զ. կարգի համար
Գիտութեան դասագիրք Նախակրթարանի Դ. կարգի համար
Թուաբանութեան դասագիրք Նախակրթարանի Զ. կարգի համար
Թուաբանութեան դասագիրք Նախակրթարանի Ե. կարգի համար
Թուաբանութեան դասագիրք Նախակրթարանի Բ. կարգի համար
Աշխարհագրութեան դասագիրք Նախակրթարանի Զ. կարգի համար

Աշխարհագրութեան դասագիրք Նախակրթարանի Ե. կարգի համար

Աշխարհագրութեան դասագիրք Նախակրթարանի Դ. կարգի համար

Աշխարհագրութեան դասագիրք Նախակրթարանի Գ. կարգի համար

ՆԵՐՔԻՆ ԲԱՐԵՎԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՆՈՒՍՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

Տիգրան Պապիկեանի տնօրէնութեան շրջանին է որ տեղի ունեցան հետեւեալ բարեփոխութիւնները:

1. Վարժարանը օժտուեցաւ ամէն կերպով ներկայանալի հանդիսասրահով մը, օժանդակութեամբ վարժարանին Շրջանաւարտից Միութեան:

2. Գիտական աշխատանոց մը ունեցաւ ուր 1945-46 էն ի վեր կը կատարուին գիտութեան դասեր փորձառական լայն գետնի մը վրայ:

3. Վարժարանը օժտուեցաւ սքանչելի մատենադարանով մը 1960-ին, շնորհիւ Էվէրեկի Մեսրոպեան Կրթասիրաց Միութեան նուիրատուութեան:

4. Շուպրայի կրթարանը օժտուեցաւ հանդիսասրահի յատուկ շէնքով մը, իսկ հետագային ալ նորակառոյց ճաշարանով և 3 դասարաններ պարունակող յարակից շէնքով մը շնորհիւ

Մէօթէմէտեան բարերարին:

5. Երեք նոր օթոպիւսներ և մէկ միքրոպիւս մը մեծապէս կանոնաւորեցին աշակերտութեան փոխադրութիւնը:

ՎԱՐԺԱՐԱՆԻՆ 100-ԱՄԵԱԿԻ ՀԱՆՂԻՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1954-55 տարիներուն մեծ շուքով տօնուեցաւ վարժարանին 100-ամեակը:

Ուխտագնացութիւն Բարերար Աղա Կարապետ Գալուստեանի շիրիմին (25-4-56)

Հոգեհանգիստ (2-5-54)

Պաշտահանդէս վարժարանի շրջափակին մէջ (9-5-54)

Հրապարակային հանդէս Ewart Memorial Hall-ի մէջ (19-5-55) նոյն առթիւ գնահատական ժէսթ 25 տարի և աւելի պաշտօնավարած ուսուցչուհիներուն:

ՅՈՐԵԼԵԱՆ ՏԻԿԻՆ ԶԱՐՈՒՀԻ ԾԱՂԿՈՒՆԻԻ

Տնօրէն Տիգրան Պապիկեանի առաջարկով և գլխաւորութեամբ կատարուեցաւ Տիկին Զարուհի Ծաղկունիի երկարամեայ պաշտօնավարութեան առթիւ յոբելինական շքեղ հանդիսութիւն մը Ewart Memorial Hall-ի մէջ (1959-ին):

ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ

Տիգրան Պապիկեանի տնօրէնութեան շրջանին վերաբերեալ տեղեկագիրներուն վրայ երբ աչք նետենք, կը տեսնենք որ 1942-61 տարեշրջաններուն ընթացքին վարժարանին աշակերտութեան թիւը աճած է աննախընթաց թափով մը, հասնելով մինչեւ 800 աշակերտի, որոնք տեղաւորուած են 29 դասարաններու մէջ:

Իսկ ամէն դպրոցական վերամուտի արձանագրուող նորեկ աշակերտութեան թիւը 100-140 ի հասած է:

Բարձրագոյն երեք կարգերէն ներս աշակերտութեան թիւը 30-էն բարձրացած է 90-ի և աւելիի:

Ուսուցչական անձնակազմը սկիզբի 45 թիւէն հասած է մինչեւ 53-ի:

Միայն նախակրթարանի բաժինէն շրջանաւարտ հանդիսացող աշակերտութիւնը թիւով 50 և աւելի կ'ըլլար իսկ բարձրագոյն երկրորդականի բաժինէն՝ 20:

Աշակերտութեան թիւը այնքան բարձրացաւ որ Ազգային

Իշխանութիւնը հարկադրուեցաւ թաղային վարժարան մը բանալ Շուպրայի մէջ ուր եւս հոժ թիւով աշակերտներ ունեցանք երկար տարիներ:

Հայրենադարձի երկու կարաւաններով, միայն Գալուստեան Վարժարանէն հայրենիք մեկնեցան մօտ 300 աշակերտներ (1947 և 1948):

Բ. ՆՈՒՊԱՐԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

1961 Սեպտեմբերին Տիգրան Պապիկեան կը նշանակուի տնօրէն Նուպարեան Վարժարանի, պաշտօն զոր կը վարէ մինչեւ 1972-73 դպրոցական տարեշրջանի վերջաւորութիւնը, այսինքն լման 12 տարիներ: Ետեւ ետեւի կրթական օրէնքներուն պարտադրանքով Ազգային Իշխանութիւնը ակամայ զինք հանգստեան կոչելու պարտադրուեցաւ:

Ծանօթ է բոլորիս 1962-էն ծայր տուած արտագաղթի պատճառած կացութիւնը մեր գաղութէն ներս, որմէ ամենէն աւելի մեր կրթական յարկերն են որ տուժեցին:

Հակառակ այդ իրողութեան, վերջին այս 12 տարիներու ընթացքին Նուպարեան Վարժարանէն ներս տարուած կրթական դաստիարակչական աշխատանքները, ձեռք բերուած ուսումնական արդիւնքները միշտ գնահատութեան արժանացան բոլոր ծնողներուն, Ազգային Իշխանութեան ինչպէս նաեւ Կրթական Իշխանութեան զանազան մարմիններուն կողմէ:

Կրթական Շրջանի Տնօրէնութիւնն ու բոլոր քննիչները միշտ յարգանքով ու մեծ համակրանքով վերաբերած են Նուպարեան Վարժարանի հանդէպ, անվերապահ գովեստի արձանագրութիւններ թողած են վարժարանէն ներս կատարուած ուսումնական, դաստիարակչական, կարգապահական և մարզական գովելի աշխատանքներուն համար:

Նուպարեան Վարժարանը դասուած է Ա. կարգի վարժարաններուն կարգին փայլուն (մումթագ) յիշատակութեան արժանանալով:

- ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ
- ՅՈՐԵԼԵԱՆ ՕՐԻՈՐԴ ԱՐՇԱԼՈՅՍ ՇԱՀՐՈՋԵԱՆԻ
- ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՒ ՃՈՒՍԱՅՈՒՄ
- ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

**- ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՓԱՅՆՈՒՄ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՆԱԽԱ-
ԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Եգիպտահայ մեր գաղութի կրթական կեանքին ներս Ուսումնական Խորհուրդի մը կազմութիւնը կը զուգադիպի Տիգրան Պապիկեանի տնօրէնութեան շրջանին: Քիչ չեն եղած իր ճիգերը համոզելու համար Ազգային Իշխանութիւնը, նման Խորհուրդի մը կազմութեան անհրաժեշտութեան մասին:

Ծանօթ մտաւորականներէ բաղկացած կրթանուէր ազգայիններու ընտրեալ կազմի գործակցութեամբ, մեր վարժարաններուն համար կը մշակուի, առաջին անգամ ըլլալով ուսումնական լիակատար ծրագիր մը իր բոլոր մանրամասնութիւններով, 1944-ին:

Վերատեսութեան կ'ենթարկուին գործածութեան մէջ գտնուող դասագիրքերը, յատկապէս հայերէնի և հայագիտական նիւթերու վերաբերեալ և զարկ կը տրուի նոր դասագիրքերու պատրաստութեան, քաջալերելով այդ ուղղութեամբ, իւրաքանչիւր նիւթի ամենէն փորձառու և հեղինակաւոր ուսուցիչները:

Յաճախակի այցելութիւններ կը կատարուին ազգային վարժարաններէն ներս Խորհուրդի անդամներուն կողմէ, և ամէն ճիգ կը թափուի մեր վարժարաններու ուսումնական ծրագրին համընթաց և կանոնաւոր կիրառումին համար:

Տիգրան Պապիկեան Ուսումնական Խորհուրդի կազմութեան առաջին շրջանէն մինչեւ հանգստեան կոչուիլը մասնակցած է անոր: Ան իր կարելոր նպաստը բերած եգիպտահայ ազգային վարժարաններէն ներս կատարուած ուսումնական գործունէութեան յարատեւ վերելքին և արդիականացումին:

Վերջին տարիներուն, մեր վարժարաններու ուսումնական ծրագրէն կարելոր բաժին մը կրթական նախարարութեան կողմէ պարտադիր հանգամանք ստանալով, Ուսումնական Խորհուրդի աշխատանքները սահմանափակուած կը մնան զուտ տոհմային դաստիարակութեան ծիրին մէջ, այսինքն այն նիւթերուն, որոնք մայրենի լեզուով կը դասաւանդուին, առաւել Անգլերէնը և Ֆրանսերէնը:

Անկախաբար մեր զոյգ կրթական յարկերէն ներս ստանձնած պատասխանատու պաշտօններէն, Տիգրան Պապիկեան իր սուղ ժամանակէն սիրայօժար կերպով կը տրամադրէ կրթական և

մշակութային զանազան կազմակերպություններ է ներս կատարած օգտակար աշխատանքներով:

ԵՂԻԱՅԵԱՆ ՍԱՆՈՒՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄ

1943-էն ի վեր, մասնաւոր հոգածութեամբ կը գործէ մանաւանդ բարեյիշատակ Գրիգոր Եղիայեանի կտակած Ուսանողական Հիմնադրամի Յանձնախումբէն ներս, իբրեւ փոխ ատենապետ, իսկ վերջերս իբրեւ ատենապետ: Մօտէն և մեծ հոգածութեամբ զբաղած է ուսումնատենչ բազմաթիւ պատանիներու պահանջներով, առաջնորդած անոնց քայլերը՝ Եւրոպական և համալսարանական ուսման տարիներու ընթացքին, ուղղութիւն տալով անոնց ուսումնական ընթացքին և միշտ գնահատելով անոնց յաջողութիւնները:

Իւրաքանչիւր ուսումնական տարեշրջանի վերջաւորութեան մեր գաղութին համար հրճուանքի և հպարտութեան առիթներ եղած են կարդալը և իմանալը զանազան մասնագիտութիւններով օժտուած բազմաթիւ հայ երիտասարդ պարոններու և օրիորդներու անունները, շատ անգամ ալ իրենց ի պատիւ սարքուած սեղաններու շուրջ:

Հրճուանքի և մխիթարութեան մեծագոյն բաժինը Տիգրան Պապիկեան ինք ունեցած է անտարակոյս քանի որ այդ խոստմնալից երիտասարդներու ստուար մեծամասնութիւնը իր աշակերտները եղած են իրենց մանուկ հասակէն սկսեալ:

ՍԱՐԳԻՍ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ՍԱՆՈՒՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄ

Նման կրթական աշխատանքի լծուած է նաեւ ՀԲԸՄ-էն ներս, երբ կոչ եղած է իրեն բարեյիշատակ Սարգիս Յովակիմեանի ուսանողական հիմնադրամին յանձնաձումով եւս զբաղելու:

Շուրջ 25 տարիներ առաջ, բարերար Սարգիս Յովակիմեանի ներկայացուցիչ Սահակ Ալթըբարմաքեանի՝ ինչպէս նաեւ Գահիրէի Յովակիմեան հաստատութեան տնօրէն Աբէլ Տատեանի հետ, պատրաստած է Յովակիմեան ուսանողական հիմնադրամին կանոնագրութիւնը:

Իսկ 1959-էն ի վեր, իր հոգածութեան առարկան ըրած է ուսումնատենչ պատանիներու ընտրութեան և անոնց ուսումնական աշխատանքներու առընթեր բազմապիսի պահանջներու հարցերը:

Բազմաթիւ անգամներ դասախօսութիւններ եւս տուած է

գիտական, պատմական, ազգային և այլ նիւթերու վրայ, նպաստելու համար անոնց ընդհանուր զարգացումին:

ԱՆՂԱՍ ՀԲԸՄ-Ի ԵԳԻՊՏՈՍԻ ԿԵՂՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԾՈՂՈՎԻՆ

1964-ին ի վեր (ատենադպիրի հանգամանքով), Տիար Յովհաննէս քեհեայեանի ատենապետութեան վերջին շրջանին:

Վերերան անդամ ՀԲԸՄ-ի 1964-ին:

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Եգիպտահայ գաղութի վերջին տասնամեակներուն պատմութեան համար յիշատակելի բազմաթիւ առիթներով Տիգրան Պապիկեան հրաւիրուած է խօսք առնելու նպատակաւ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Հայոց Հայրապետի այցելութիւններուն առթիւ (1956, 5-11-1963 և 28-1-1965-ին):

Հայրենի տաղանդաւոր բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանի այցելութիւն (19-2-1963)

Կիւլպէնկեան Հիմնարկութեան ներկայացուցիչներու այցելութիւն (29-2-1964)

Փրոֆ. Վարազդատ Յարութիւնեանի այցելութիւն (9-4-1968)

Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահ Վարդգէս Համազասպեանի այցելութիւն (18-1-1971)

Ինչպէս նաեւ եգիպտահայ թեմի երջանկայիշատակ Առաջնորդ Մամբրէ Արքեպիսկոպոս Սիրունեանի 40-ամեայ Յորբելեանին առթիւ (7-11-1963)

Հ.Բ.Ը.Միութեան 60-ամեակի յորբելինական հանդէսին առթիւ Քահիրէ (20-12-1967) և Աղեքսանդրիա (16-4-1967)

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հիմնադրութեան 40-ամեակին առթիւ (8-12-1968)

Ազգային բարերար բարեյիշատակ Աղա Կարապետ Գալուստեանի շիրիմի բացում

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Անկախաբար այս բոլորէն՝ Տիգրան Պապիկեան կատարած է բազմաթիւ դասախօսութիւններ եգիպտահայ մշակութային օրահներու հրաւերին ընդառաջելով:

Մայրերու տօնի և այլ առիթներով

Փարաւոնեան քաղաքակրթութեան և հնութեանց մասին

Վիկտոր Համբարձումեանի կեանքն ու գործը (11-2-71)
Անանիա Շիրակացիի կեանքն ու գործը (8-2-1973 Կոկանեան)
(7-3-73 ՀԳՍ)



Տպաւորութիւններ Մայր Հայրենիքէն (1969-ին ՀԳՍ,
Ընթերցասրահ, Յուսաբեր)

Մոնթրէալի Ռատիոկայանէն՝ խօսք Քանատահայ Նոր Սերունդին
(5-8-1973) և բազմաթիւ այլ դասախօսութիւններ՝ ազգային, կրթական
և գիտական նիւթերու մասին:


ՔՆՆԱԿԱՆ ՃԱՄԲՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Եգիպտահայ գաղութի գաւակները հաղորդակից դարձնելու
համար Եգիպտոսի հնադարեան պատմութեան և փարաւոնեան
հազարամեայ փառաւոր քաղաքակրթութեան յուշարձաններուն և
տաճարներուն, Տիգրան Պապիկեան առաջին անգամ ըլլալով մեր
գաղութի պատմութեան մէջ, գաղափարը յղացած է քննական
ճամբորդութիւններ կազմակերպել դէպի Լուքսոր և Ասուան,
առաջնորդելով ուսանողներու, ուսուցիչներու և ազգայիններու
ստուար բազմութիւն մը:

Քննական ճամբորդութիւնները սկսած են 1947-ին և տեղի
ունեցած են 10 անգամ մինչեւ 1966 թուականը, որոնց շնորհիւ շուրջ
700 անհատներ պատեհութիւնը ունեցած են ծանօթանալու
փարաւոնեան քաղաքակրթութեան ինչպէս նաեւ Ասուանի Բարձր
Զրամբարի կառուցման աշխատանքներուն:



ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԻԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՄԸ ԽՕՍՔԵՐԷՆ



ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԻԱՆ ՂԱՍՏԻԱՐԱԿԻ ՄԸ ԽՕՍՔԵՐԵՆ

Այս խօսքերը, որոնք ուղղուած են աշակերտներուն, ուսուցիչներուն և ընդհանուրին, ցոյց կու տան իր մօտեցումները կրթական գործին հանդէպ:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԽՕՍՔԵՐ

Ձեր կեանքին նպատակը ըրէք ձեր նկարագիրը ազնուացնել ամէն օր եւ անհուն սիրով փարիլ ձեր աշխատանքին:

*

Սիրելի տղաք, ճանչցէ՛ք ամէն բանէ առաջ եւ լա՛ւ ճանչցէք ձեր անցեալը, ձեր նախնիներուն փառաւոր պատմութիւնը:

*

Ամենէն աւելի սիրեցէ՛ք, անհո՛ւն սիրով սիրեցէք ձեր հայրենիքը, Մայր Հայաստանը, ձեր մայրենի լեզուն եւ ձեր պապերուն հաւատքը:

*

Ոչ ոք իրաւունք ունի կեանքի վայելքներէն երջանկութիւն ակնկալելու առանց տքնութեան, առանց քրտինքի, առանց աշխատանքի:

*

Հպա՛րտ եղէք մեր ազգին պատմութիւնով եւ մանաւանդ անոր դարաւոր ու հանձարեղ մշակոյթով:

*

Եթէ դարերու պատմութիւն ունեցող մեծափարթամ ու աշխարհակալ ժողովուրդներ կը պարծենան մտքի, գրչի եւ արուեստի իրենց տիտաններով, որքան աւելի իրաւունք ունի հայր հպարտ զգալու, երբ դարերու խորքէն Պատմահայր Խորենացիին խրոխտ ձայնը մեզի կը յիշեցնէ «Թէպէտ եւ եմք ածու փոքր, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս»:

Երբ Եղիշէն իր ոսկեղնիկ լեզուին աննման վսեմութեամբ մեզի համար լուսաւոր կը դարձնէ մահուան առեղծուածը ըսելով՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»:

Երբ երանելին Նարեկացի իր հոգեզմայլ աղօթքներով եւ մըմունջներով հայու հոգին կը հասցնէ երկնային բարձունքներու:

Երբ Արամ Խաչատրեանը իր սքանչելի մեղեդիներով կ'առնինքնէ ու կը հմայէ քաղցր ու ազնիւ նուագի սիրահար աշխարհի բոլոր ունկնդիրները:

Երբ վերջերս, Վիքտոր Համբարձումեան ներկայ աշխարհի մեծագոյն միտքերուն հետ խօսքի կը նստի աստղերուն լեզուով:

Ինչո՞ւ հպարտ չըլլալ:

*

Սիրելի՛ տղաք, կ'ուզենք որ դուք պատգամաբերներ ըլլաք սիրոյ եւ խաղաղութեան:Սէրը՝ մարդկային զգացումներուն ամենէն վսեմն է, ամենէն ստեղծագործը եւ կենդանարար: Անով միայն հոգիին խռովքները կը հանդարտին եւ սրտին փոթորիկները կ'անհետանան, ու տեղի կու տան խաղաղութեան պայծառ ու ջերմացնող արեգակին:

*

Խաղաղութիւնը մարդուն համար կեանքի հաւասար թանկագին գանձ մըն է, որուն արժէքը կ'ըմբռնենք, աւաղ, երբ զայն կը կորսնցնենք: Թող ձեր կեանքն ու գործերը սիրոյ եւ խաղաղութեան օրհնաբեր օրհնակ ըլլան:

Թող ձեր խօսքերն ու մտածումները միայն սիրոյ եւ խաղաղութեան սերմերը ցանելու ծառայեն ձեր տունէն ներս, ձեր ընկերային կեանքէն ներս, ձեր ազգային կեանքէն ներս եւ ապա ձեր մարդկային կեանքին ողջ տելողութեան:

Սիրելի՛ աշակերտներ

Կ'ուզենք որ անհուն սիրով փարած մնաք ձեր մայրենի լեզուին, ձեր պապենական սուրբ հաւատքին ու ձեր մատաղ հասակին հետ ծաղկեցնէք այն փոքր, բայց շատ թանկագին ածուն, որ ձեր սիրելի վարժարանը ձեզի յանձնեց:

Երբե՛ք, երբեք պիտի չուզէի՞նք որ ձեր հոգիին գանձարանը դատարկ մնայ, որովհետեւ եթէ ոսկիի գանձարաններ շատ դիւրաւ կրնան դատարկուիլ, հոգիի հարուստ գանձարանը կը մնայ միշտ անբռնաբարելի, միշտ անկորնչելի եւ միշտ լուսաշող:

*

Կրօնական դաստիարակութեան նպատակը չէ նարեկացիներ պատրաստել: Անոնք կը ծնին ու պիտի ծնին իրենց ժամանակի պայմաններուն բերումով միայն: Աշխատեցէ՛ք, սիրելի տղաք, որովհետեւ աշխատանքը միայն ձեզի կրնայ հասցնել հոն, ուր կը փափաքիք հասնիլ, աշխատեցէ՛ք որպէսզի ըլլաք ազատ ձեր կեանքին մէջ, աշխատեցէ՛ք, որովհետեւ աշխատանքը կեանքին մեծագոյն օրէնքն է ու աղբիւրը բոլոր բարիքներուն:

*

Սիրելի՛ տղաք, մենք բոլորս կ'ուզենք ձեզ տեսնել աւելի հասունցած՝ միտքով, աւելի զօրացած՝ հաւատքով, աւելի ազնուացած՝ նկարագրով, որպէսզի վստահ ու պայծառ տեսնենք ապագան մեր դարաւոր ժողովուրդին:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԽՕՍՔԵՐ

Ի՞նչ արժէք ունին սաստը, պատիժներն ու սպառնալիքները, եթէ տղան ոչինչով պատասխանատու է իր վիճակին:

Եթէ տղան կը յամենայ, կը ծուլանայ կամ կը խուսափի իր աշխատանքներէն, այդ կը նշանակէ թէ օրկանական պատճառ մը գոյութիւն առնել սկսած է իր մարմնէն ներս: Տարակոյս չկայ որ երբ մարմինը դարմանուի, նոյն ատեն պիտի դարմանուի նաեւ իր «ծուլութիւնը»:

*

Երանի թէ օր մը երջանկութիւնը տրուէր մեզի ճակատաբաց նայելու բոլորին եւ հպարտութեամբ կարենալ ըսելու, հայկական զարմին այս հոյակապ սերունդները որ կը տեսնէք, մենք՝ ոչ համեստ մեր բաժինը բերած ենք անոնց փառաւոր կերտումին նուիրական աշխատանքին:

Ի՞նչ կ'արժէ վարժարան մը, որ կը միտի իրեն յանձնուած պատանհներուն միտքը միայն լեցնելու այլազան գիտելիքներով եւ սակայն դատարկ ու անմշակ կը թողու անոնց սիրտն ու հոգին:

*

Որեւէ դաս իր նպատակին ծառայած չըլլար, եթէ տղուն դատողութեան, ճաշակին եւ մտածումներուն ազնուութեան չօգնէ:

Դաստիարակին գերագոյն պարտականութիւնն է մօտէն հետեւիլ անոնց կեանքին բոլոր երեսակներուն, հսկել, ուղղել, լուսաւորել եւ առաջնորդել անոնց քայլերը:

*

Հայ ուսուցիչը պէտք է անհատական աշխատանք տանի իր ինքնազարգացումը առողջ եւ արդիական հիմերու վրայ պահելու համար: Այդ կերպով իրեն վստահուած նուիրական գործը կրնայ արդիւնաւոր դարձնել եւ նոյն ատեն բարձրացնել ուսուցչութեան վարկը՝ յաչս հասարակութեան:

*

Քիչ բան լաւ սորվեցնելու համար պէտք է շատ բան գիտնալ:

*

Ընկոյզը իր կեղեւովը տանք տղուն, որպէսզի միջուկը աւելի համով գայ իր քիմքին:

*

Դասաւանդութեան նպատակն է հաւասարակշռուած միտքեր եւ ներդաշնակ նկարագրի տէր անհատներ պատրաստել: Այլապէս ընկերային կեանքը անհանդուրժելի դժոխքի մը կը վերածուի:

*

Բոլոր դպրոցները, բոլոր ծրագիրները, բոլոր մեթոտները անարժէք կը մնան առանց դաստիարակի անձին: Ան է որ առաջին գծի վրայ կուգայ բոլոր տեսակի եւ բոլոր ժամանակներու մանկավարժական ընթերցումներուն, համոզումներուն եւ արդիւնքներուն մէջ:

*

Չկայ ասպարէզ մը որ պահանջէ զոհաբերութեան այնքան անսպառ եւ տեսական վերանորոգում, որքան ուսուցչական

ասպարէզը:

*

Ոմանք դաստիարակ կը ծնին, բաւական չէ, ուրիշներ կը պատրաստուին, բաւական չէ: Երկուքն ալ պէտք ունին տեւական նորոգումի, կազմութեան եւ յեղաշրջումի:

ԸՆԴՀԱՆՈՒՐԻՆ ՈՒՂՈՒԱԾ ԽՕՍՔԵՐ

Նկարագրի ազնուութիւնը եւ աշխատանքի սէրը մարդուն երջանկութեան մշտնջենական աղբիւրները եղած են եւ պիտի մնան:

*

Մեր ազգային վարժարաններուն գոյութեան նպատակը, որեւէ հայ վարժարանի գոյութեան նպատակը, անոնց համար կատարուած անհամար զոհողութիւնները, բարոյական թէ նիւթական, անոնց բարեյիշատակ բարերարներուն հիմնական բաղձանքը, ինչպէս նաեւ ազգովին բոլորիս անխախտ հաւատքը մէկ եղած է եւ ուրիշ բան չի կրնար ըլլալ եթէ ոչ մեր զաւակներուն տալ, ամէն բանէ առաջ, տոհմային առողջ դաստիարակութիւն մը, որ հիմնուած ըլլայ մայրենի լեզուին վրայ, ազգային գիտակցութիւնը մշտարթուն եւ վառ պահող էական ծանօթութիւններով եւ մանաւանդ անոնց ներշնչած ոգիով:

*

Մայր Հայրենիք - Մայրենի Լեզու- Հայ Վարժարան, Սրբազան Երրորդութիւն որուն հանդէպ դարեր շարունակ մեր ժողովուրդին ունեցած պաշտամունքը՝ մարդկային պատմութեան մէջ հազիւ թէ իր նմանը ունեցած ըլլայ:

*

Հայ Դպրոցը «Հայրենիք» է սփիւռքահայ աշակերտին համար:

*

Հայ վարժարանէն ներս է որ տղոց ազգային բազկերակը կը տրոփէ կենսայորդ ջերմութեամբ, ուր տղաքը կը զգան թէ իրենք առոյգ ու կենսախայտ շառաւիղներն են դարաւոր ու արժէքաւոր ժողովուրդի մը:

Հայ վարժարանը, լոկ ուսումնական յարկ մը ըլլալէ առաջ, ազնիւ զգացումներու, անշեղ համոզումներու եւ մանաւանդ ազգային գիտակցութեան մշտաբորբոք վառարան մըն է:

*

Հազիւ քանի մը ամիսներ մեզմէ բաժնուած եւ օտար վարժարաններ յաճախել սկսած մեր տղաքն ու աղջիկները, երբ կ'այցելեն մեզի, իրենց առաջին խօսքը կ'ըլլայ «Ուրի՛շ է մեր դպրոցը»:

*

Չկա՛յ հայ դպրոցին նման կենսատու եւ լուսաւոր փարոս: Աշխարհի վրայ չկա՛յ աւելի գեղեցիկ եւ աւելի կենսատու երկիր քան մայր հայրենիքը:

*

Եթէ ուսումը չէ նպաստած տղուն իմացական դաստիարակութեան հետ տալու նկարագրի դաստիարարակութիւն՝ ձախողած է իր նպատակին մէջ:

*

Ժողովուրդի մը քաղաքակրթական աստիճանը այսօր կը չափուի կրթական գործին յատկացուցած իր պիտճէովը:

*



Պատանեկութեան շրջանը նոր թեւակոխած մեր աշակերտութեան մօտ՝ իմացական աշխարհին չափ հոգեկան աշխարհն ալ պահանջը ունի լոյսին, ճշմարիտին եւ ազնիւին:

*


Դաստիարակութեան գործին մէջ ծայրայեղութիւնը միշտ վնասակար հանդիսացած է:

Հաւասարակշռուած եւ ներդաշնակ ընթրնումներու մեթոտները լաւագոյն արդիւնքներ տուած են միշտ:

**ԵՐԱՆՏԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՂԵՐՁ**



ՄԱՍԼՈՅ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ
ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԻԱՆԻ
ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ
ՅՈՐԲԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵՆԷՆ



**ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆԻ
ՔԱՌԱՄՆԱՄԵԱՅ ՌԻՍՈՒՑԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ
(«Արել»ի անստորագիր լրատուութիւն)**

Երէկ Կիրակի, 5 Մայիս 1974 երեկոյեան ժամը 7:30-ին տեղույս «Նայլ Հոլ» Սրահին մէջ, նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ Գահիրէի Ազգային Իշխանութեան տեղի ունեցաւ բազմավաստակ ուսուցիչ եւ տնօրէն Տիար Տիգրան Պապիկեանի կրթական, դաստիարակչական գործունէութեան քառասնամեակը, ի ներկայութեան հոծ բազմութեան մը, բաղկացած Ազգային Իշխանութեան, զանազան հոգաբարձութեանց անդամներէ, մշակութային միութեանց վարչականներէ եւ բարեկամներէ:

Հանդիսութիւնը դրուած էր նախագահութեանը տակ Եգիպտոսի Առաջնորդական Տեղապահ Տ. Ներսէի Ծ. Վրդ. Բապուճեանի:

Տեղի ունեցաւ գեղարուեստական կոկիկ, պատշաճ յայտագիր մը: Բացման խօսքը եւ հանդիսավարութիւնը կատարեց Թեմական Ժողովի անդամ եւ Յորելեարի նախկին աշակերտներէն Պր. Վահան Զէչճէնեան: Օրուան գլխաւոր բանախօսն էր Թեմական Ժողովի ատենադպիր Պր. Յակոբ Համբիկեան: Ազգային Իշխանութեան կողմէ խօսեցաւ Թեմականի ատենապետ Պր. Արթո Պըլըքտանեան: Աղէքսանդրիոյ Ազգային Իշխանութիւնն ալ երկու ներկայացուցիչներով մասնակցեցաւ զնահատանքի այս արտայայտութեան, յանձինս Աղէքսանդրիոյ Թեմական Ժողովի Բ. Ատենադպիր Պր. Մուրատ Քէօշկէրեանի եւ Քաղաքական Ժողովի անդամ Պր. Նազարէթ Մարկոսեանի: Առաջինը նաեւ խօսք արաւ ի դիմաց Աղէքսանդրիոյ Ազգային Իշխանութեանց:

Ելոյթ ունեցաւ նաեւ Առաջնորդական Տեղապահ Հայր Սուրբը, վերջին խօսողը եղաւ ինքը՝ Յորելեարը:

Ստացուած էր Օրհնութեան Գիր մը ազգիս Ընդհանրական Հայրապետէն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վեհափառ Վազգէն Ա.-էն, բազմաթիւ շնորհաւորական նամակներ եւ հեռագիրներ հանրաժանօթ անձնաւորութիւններէ եւ նախկին աշակերտներէ, Հայրենիքէն եւ Սփիւռքի զանազան երկիրներէ: Ծաղկեկողովներ դրկած էին 6 կազմակերպութիւններ: Յուշանուէրներ յանձնեցին Գահիրէի եւ

շարունակութիւն էջ 46

ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆԻ
ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒԹԵԱՆ
ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ
(«Յուսաբեր»ի անստորագիր լրատուութիւն)

Կիրակի 5 Մայիս 1974 երեկոյեան ժամը 7:30-էն սկսեալ Գահիրէի «Նայլ Հօլ» հանդիսասարահին մէջ տեղի ունեցաւ վաստակաւոր կրթական մշակ Տիար Տիգրան Պապիկեանի քառասնամեայ դաստիարակչական գործունէութեան յօբելէնական հանդիսութիւնը:

Սոյն հանդիսութիւնը կը կատարուէր նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ Գահիրէի Ազգային Իշխանութեան, իսկ նախագահութիւնը կը վայելէր Թեմիս առաջնորդական տեղապահ Գերայ. Տէր Ներսէս Ծ. Կրդ. Բապուճեանի:

Ներկայ էին Լուսաւորչական եւ Հայ Կաթողիկէ քահանայ հայրեր, Ազգային Իշխանութեան անդամներ, հոգաբարձութեանց եւ Գահիրէի հայ մշակութային կազմակերպութեանց ներկայացուցիչներ, եւ յօբելէարին գործունէութիւնը գնահատող ազգայիններու ստուար բազմութիւն մը:

Եգիպտական քայլերգէն ետք, որ դաշնակի վրայ կատարուեցաւ տիկին Նուարդ Եանտոլոյի կողմէ: Բացման խօսքը կատարեց հանդիսավար Պր. Վահան Չէչճէնեան:

Պր. Վարուժան Յ. Գազանճեան արտասանեց Դ. Վարուժանի «Դաստիարակ»ը:

շարունակութիւն էջ 45-էն

Աղէքսանդրիոյ Ազգային Իշխանութիւնները, ինչպէս նաեւ աշակերտի մը ծնողքը՝ Տէր եւ Տիկ Յ. Յակոբեան:

Մանրամասնութիւնները յաջորդիւ:

«Արեւ» եւս մասնակից եղած է գնահատանքի արտայայտութիւններուն, ջերմօրէն կը շնորհաւորէ Պր. Տիգրան Պապիկեանը եւ շնորհաւորութիւններուն կը միացնէ առողջութեան եւ բարօրութեան լաւագոյն մաղթանքներ:

«Արեւ» օրաթերթ, 6 Մայիս 1974

Պատանի արուեստագետ Արմեն Մազլումեան դաշնակի վրայ ինքնավստահ ելոյթ մը ունեցաւ, յաջողութեամբ նուագելով Պեթովէնի «Սօնաթին»ը (ա. մաս) եւ Ա. Խաչատուրեանի «Էթիտ»ը:

Օրիորդ Մարօ Սազայեան, դաշնակի նուագակցութեամբ տիկին Նուարդ Եանտոլոյի, մեներգեց Այվազեանի «Քարաւան» եւ «Հայաստան» երգերը:

Ապա օրուան գլխաւոր բանախօս, Թեմական ժողովի ատենադպիր Պր. Յակոբ Համբիկեան խօսեցաւ իմաստալից եւ հակիրճ ճառ մը, վեր առնելով հայ դաստիարակին ստանձնած ազգանուէր գործունէութիւնը, հայապահպանման եւ հայ մշակոյթի գոյատեւման դժուարին ներկայ պայմաններուն մէջ:

Յոբելէար Տիար Պապիկեանը մեծարելով, մեր յարգանքը ուղղած պիտի ըլլանք նաեւ հայ դպրոցին, ըսաւ յարգելի բանախօսը:

«Զանգեզուր» պարախումբին մենակատարները յաջորդաբար ներկայացուցին «Մեծ մայրիկը» եւ «Թարանթէլ» պարերը:

Քառորդ ժամ տեւող դադարէ մը ետք, հանդիսավար Պր. Զէչճէնեան կարդաց օրուան հանդիսութեան առթիւ Յոբելէարին ուղղուած շնորհաւորական հեռագիրներ, եւ նամակներ զրկող անձնաւորութիւններու եւ նախկին աշակերտներու անունները: Օրինութեան գիրով մը Յոբելէարը կը շնորհաւորէր նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգէն Ա. Հայրապետը:

Գահիրէի Ազգային Իշխանութեան կողմէ խօսք առաւ Թեմական ժողովի ատենապետ Պր. Արթօ Պըրըքտանեան:

Տիկին Լիզա Քըրետեան, դաշնակի ընկերակցութեամբ տիկին Էլիտէ Տէլլօ Սթրոլկոյի, մեներգեց անմահ Կոմիտասի «Գարուն ա» եւ «Հայաստան»ը:

Ապա, տիկին Մ. Զօփուրեան արտասանեց ժազ Յակոբեանի «Ուսուցիչներուս» քերթուածը:

Աղեքսանդրիոյ Ազգային Իշխանութեան կողմէ խօսք առաւ Թեմական ժողովի Բ. Ատենադպիր Պր. Մուրատ Քէօշկէրեան:

Պարախումբին ներկայացուցած «Ուզունտարա» մենապարէն եւ փոքրերու «Հնդկական պար»էն ետք բեմ հրաւիրուեցաւ օրուան նախագահ Գերայ. Տէր Ներսէհ Ծ. Վրդ. Բապուճեան իր խօսքը ըսելու:

Տեղապահ Հայր Սուրբը իր խօսքին մէջ վեր առնելէ ետք Յոբելէարին դաստիարակի եւ կրթական մշակի բոլոր

արժանիքները, բեմ հրաւիրեց Պր. Պապիկեանը եւ Պատկ. Թեմական ժողովի ատենապետ Պր. Պըլըքտանեանի ձեռամբ անոր յանձնուեցաւ Գահիրէի Ազգային Իշխանութեան կողմէ պատրաստուած յիշատակի ոսկիէ մետալը:

Աղեքսանդրիոյ Ազգային Իշխանութեան անունով, տեղւոյն Քաղաքական ժողովի անդամ Պր. Նազարէթ Մարկոսեան յիշատակի նուէր մը եւս տուաւ Յոբելեարին:

Ապա, խօսք առաւ ինքը Յոբելեարը, որ յուզումնախառն ելոյթով մը շնորհակալութիւն յայտնեց Գահիրէի Ազգային Իշխանութեան՝ կատարուած նախաձեռնութեան եւ կազմակերպութեան համար, յոբելեանական կարգադիր յանձնախումբին եւ բոլոր անոնց, որոնք իր քառասնամեայ գործունէութեան ընթացքին անվերապահ գործակցութիւն ցոյց տալով նպաստած էին հայ սերունդներուն հայեցի եւ տոհմային կրթութիւն ջամբելու նուիրական առաքելութեան:

Հանդիսութիւնը վերջ գտաւ Տեղապահ Հայր Սուրբին պահպանիչով: Այս առթիւ, արելշատութիւն, առողջութիւն եւ երկար կեանք մը կը մաղթենք Յոբելեար Տիգրան Պապիկեանին: Վարձքդ կատար նուիրեալ դաստիարակ, եւ թող քու գործունէութիւնդ օրինակ դառնայ աշխարհացոյի հայ մշակներու պայծառ երթին:

«Յուսարեր» օրաթերթ, 8 Մայիս 1974

ՅՈՐԲԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆԻ ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ՌԻՍՈՒՑԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ

Ինչպէս «Արեւ»ի Երկուշաբթի Մայիս 6-ի թիւով գրած էինք, Կիրակի 5 Մայիս 1974 երեկոյեան ժամը 7:30-ին քաղաքիս «Նայլ Հոլ» սրահին մէջ տեղի ունեցաւ վաստակաւոր կրթական մշակ Տիար Տիգրան Պապիկեանի դաստիարակչական 40-ամեայ գործունէութեան յոբելինական հանդէսը նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ Գահիրէի Ազգային Իշխանութեան և նախագահութեամբ Եգիպտոսի Առաջնորդական Տեղապահ Գերապատի Տ. Ներսէս Ծ. Վ. Բապուճեանի:

Ներկայ էին Ազգային Իշխանութեան զոյգ ժողովներու՝ թեմականի եւ քաղաքականի ատենապետները՝ Տիար Արթօ Պըլըքտանեան եւ Տիար Հայկազուն Քիրքճեան, ազգային երեսփոխաններ, հոգաբարձութեանց եւ զանազան մարմիններու անդամներ, արժանապատի Տէր Նարեկ Քինյ. Ֆրընճեան եւ քոյր Կաթողիկէ Համայնքի վարդապետներ, ինչպէս նաեւ յոբելեարին նախկին աշակերտներ, բարեկամներ, ազգականներ եւ ազգայիններ: Աղէքսանդրիոյ Ազգային Իշխանութիւնն ալ իր մասնակցութիւնը բերաւ յարգանքի այս արտայայտութեան՝ երկու ներկայացուցիչներով, յանձինս Թեմական ժողովի Բ. Ատենադպիր Տիար Սուրատ Քէօշկերեանի եւ Քաղաքական ժողովի անդամ Տիար Նազարէթ Մարկոսեանի:

Հանդէսի պատրաստութեան աշխատանքները տարած էր այս առթիւ կազմուած կարգադիր յանձնախումբ մը՝ նախագահութեամբ Գերայ. Հայր Սուրբին: Յոբելինական հանդէսը ունէր նաեւ պատուոյ յանձնախումբ մը:

Հանդէսը սկսաւ որոշեալ ժամուն, եգիպտական քայլերգի հնչիւններով: Բացման խօսքը կատարեց յոբելեարին նախկին աշակերտներէն եւ ազգային երեսփոխան Տիար Վահան Զէչճէնեան: Ան նաեւ կատարեց հանդիսավարութիւնը եւ հետզհետէ բեմ հրաւիրեց Տիար Վարուժան Գազանճեանը, որ արտասանեց Դ.

Վարուժանի «Ղաստիարակ»ը, փոքրիկն Արմէն Մազլումեանը, որ դաշնակի վրայ կտոր մը նուագեց, Օրիորդ Մարօ Սագայեանը, որ դաշնակի ընկերացութեամբ Տիկին Ն. Եանտոլոյի երկու կտորներ երգեց:

Օրուան գլխաւոր բանախօսն էր Պատկառելի Թեմական ժողովի ատենադպիր Տիար Յակոբ Համբիկեան, որ ըրաւ բովանդակալից եւ կուռ բանախօսութիւն մը:

Յայտագրին Բ. մասին սկիզբը Ազգային Իշխանութեան կողմէ խօսք առաւ Պատկառելի Թեմական ժողովի ատենապետ Տիար Արթօ Պըլըքտանեան, Տիկին Է. Տելլօ Սթրոլկոյի դաշնակի ընկերակցութեամբ երկու երգերով հանդէս եկաւ Տիկին Է. Քրէտեան, ժաք Յակոբեանի «Ուսուցիչներուս» արտասանութիւնը կատարեց Տիկին Մանուշ Չոփուրեան, Տիար Մուրատ Քէօշկերեան յանուն Աղեքսանդրիոյ Ազգային Իշխանութեան ուղերձ մը կարդաց:

Ձանգեզուր պարախումբին անդամները, ղեկավարութեամբ պալէթմայէսթր Տիկին Էլէնորա Գրիգորեանի, իրենց քանի մը պարերով հանդէսին փայլը աւելցուցին: Այսպէս, Վանիա Էքսերճեան եւ Սիւզիկ Յակոբեան, կատարեցին մեծ մայրն ու թռնիկը պարը: Լիւսի Աւետիսեան հանդէս եկաւ «Թարանթէլ» մենապարով: Աղջնակներու խումբ մը մեզի հրամցուց հնդկական պար մը՝ մենակատարութեամբ Սիւզիկ Յակոբեանի, ինչպէս նաեւ պարախումբի սիրուած մենակատարներէն Օրիորդ Նայիրի Փարթամեան ելոյթ ունեցաւ հեզաձկուն «Ուզունտարա» մենապարով: Յայտագրին բոլոր դերակատարներն ալ ջերմօրէն ծափահարուեցան:

Վերջընթեր խօսողը եղաւ Գերապատիւ Նախագահ Հայր Սուրբը, իսկ վերջինը նոյնինքն Յոբելեարը՝ Տիար Տիգրան Պապիկեանը: Խօսքերը առանձինն հետզհետէ պիտի տանք «Արեւ»ի էջերէն:

Այս առթիւ օրհնութեան գիր մը յղած էր Ամենայն Հայոց Վեհափառ Վազգէն Ա. Կաթողիկոսը, շնորհաւորական գիրեր ղրկած էին Արտասահմանի հետ Մշակութային Կապի Կոմիտէի Նախագահ Տիար Վարդգէս Համագասպեան, մեծանուն բարերար Տիար Ալեք

շարունակութիւն էջ 64

ՎԱՀԱՆ ՉԷՉՃԷՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆԻ ՅՈՐԵԼԵԱՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Գերապատիւ Հայր Սուրբ,
Արժանապատիւ Քահանայ Հայրեր,
Յարգարժան Յորբելեար,
Սիրելի Հանդիսականներ,

Գահիրէի Ազգային Իշխանութեան նախաձեռնութեամբ եւ գահիրէաբնակ իր նախկին աշակերտներու գործակցութեամբ, մեծ ուրախութեամբ կը տօնենք այսօր Գահիրէի հայ համայնքի ծոցին մէջ հասակ նետած եւ ամբողջովին անոր նուիրուած տիպար եւ անխոնջ դաստիարակին, Գալուստեան եւ Նուպարեան վարժարաններու Տնօրէն Տիգրան Պապիկեանի կրթական գործունէութեան քառասնամեայ յորբելանը:

Իբրեւ մին Ազգային Իշխանութեան անդամներէն ու մին իր նախկին աշակերտներէն խորապէս զգացուած եմ ու ինքզինքս բախտաւոր կը համարեմ որ իր հազարաւոր աշակերտներէն ինծի վիճակուեցաւ երախտագիտական այս պատշաճ արտայայտութեան բացումը կատարելու պատիւը: Տիգրան Պապիկեան, որ բառին բուն առումով սիրահարուած իր ասպարէզին եւ այդ սիրոյ պարգեւած գերագոյն եւ անասելի հաճոյքներէն զինով՝ ամբողջ երիտասարդութիւնը, կորովն ու ուժը, ի զին զոհողութեանց, նուիրեց անոր:

Այսօր, ինչպէս ինք հպարտ է ի տես իր հասցուցած սերունդներուն, նոյնպէս եւ մենք, իր աշակերտները, հպարտ ենք որ Տիգրան Պապիկեանի նման դաստիարակի մը շունչին տակ է որ կոփուած են մեր անմեղ մանկութեան եւ փոթորկոտ պատանեկութեան դժուար տարիները, հեռու այդ տարիքին յատուկ բարդոյթներէն, հայկական տոհմիկ դաստիարակութեամբ մը թաթախուն:

Տիգրան Պապիկեան մանուկ հասակէն կը մտնէ Գալուստեան Ազգային Վարժարանի մանկապարտէզի բաժինը:

Իր նախակրթութեան վերջին տարիներուն, Քալուստեան վարժարանէն ներս հետզհետէ մուտք կը գործէ Պոլսահայ ծանօթ մտաւորականներու փաղանգ մը, որոնց շունչին վարակիչ ջերմութիւնը խանդավառութեամբ կը լեցնէ նոյն տարիներու պատանի սերունդը, անոր մօտ անսովոր եռանդ արթնցնելով ուսման եւ ազգային գիտակցութեան հանդէպ:

Այդ շրջանի բազմակողմանի հմտութեամբ օժտուած տնօրէն Տիար Գրիգոր Կիրակոսեանի ջանքերով եւ օրուան Առաջնորդ երջանկայիշատակ Թորգոմ Արք. Գուշակեանի կարգադրութեամբ վարժարանին ուսուցչական կազմին կ'անդամակցին իրենց կրթական վաստակով արդէն իսկ համբաւի տիրացած ուսուցիչներ:

1924 Յունիսին, Տիգրան Պապիկեան շրջանաւարտ կ'ելլէ «փայլուն» գնահատութեամբ:

Օրուան Ազգային Իշխանութիւնը, գաղութին ազգային-կրթական ապագային համար լաւագոյն եւ հաստատ հիմեր ապահովելու հեռատես մտածումով, կը փութայ ուսումնատենչ եւ խոստմնալից 5 պատանիներ Եւրոպա ուղարկել՝ մանկավարժական մասնագիտութեամբ օժտելու համար զանոնք, օգտուելով առ այդ բարեյիշատակ բարերար Գրիգոր Եղիայեանի հիմնած ֆոնտէն:

Տիգրան Պապիկեան, մին այդ ընտրեալներէն, Քահիրէի ֆրանսական Լիսէի մէջ տարի մը պատրաստուելէ վերջ կ'ուղարկուի Ֆրանսա 1925 Հոկտեմբերին:

Փայլուն յաջողութեամբ ւարտելէ վերջ Aix-en-Provence-ի ուսուցչանոցի գրականութեան, պատմութեան, հոգեբանութեան եւ մանկավարժութեան դասընթացքները, ան կը շարունակէ իր ուսումը Մարսիլիոյ Գիտական համալսարանէն ներս, ուրկէ կը վկայուի յատկապէս բնագիտութեան, տարրաբանութեան եւ բնական գիտութիւններու ճիւղերէն:

1933 Սեպտեմբերին սկիզբ կ'առնէ իր «Ալմա Մաթեր»էն՝ Քալուստեան Վարժարանէն ներս ուսուցչական եւ տեսչական երկարամեայ գործունէութիւնը, որ կը տեւէ մինչեւ 1961-ի Սեպտեմբեր ամիսը, այսինքն 28 տարիներ:

Յաջորդ տարին իսկ նշանակուելով Գալուստեան վարժարանի եռանդամ տեսչական մարմնի անդամ, իրեն կը վստահուի ուսումնական բաժնի ամբողջական պատասխանատուութիւնը: Անոր ներկայացուցած նախագիծին շնորհիւ վարժարանին դիմագիծը հիմնական բարեփոխութեան կ'ենթարկուի, մանկապարտէզը կ'անջատուի նախակրթարանի բաժինէն որուն 6 կարգերուն վրայ կ'աւելնան բարձրագոյն նախակրթարանի 3 կարգերը:

1936-39 տարեշրջաններուն վարժարանի աշակերութիւնը կը պատրաստուի ֆրանսական պըռըվէի, նոյն ատեն ստանալով հայագիտական նիւթերու բաւական լուրջ պատրաստութիւն մը:

1942-43 տարեշրջանին, Տնօրէն Լեւոն Թաշճեանի անակնկալ մահէն վերջ իր ուսերուն վրայ կ'առնէ վարժարանին ընդհանուր տնօրէնութեան պատասխանատու պաշտօնը, զոր կը վարէ լման 19 տարիներ մինչեւ 1961: Իր նախաձեռնութեամբ 1939-56 տարիներուն վարժարանին բարձրագոյն կարգերուն համար կը մշակուի G.C.E անգլիական քննութիւններուն պատրաստելու ուսումնական ծրագիր մը, 1945-49 տարեշրջաններուն վարժարանը վերածուեցաւ երկրորդական վարժարանի յաւելուածական 2 կարգերով, իբրեւ ուսումնական ծրագիր ունենալով ֆրանսական պաքալօրէայի ծրագիր: Այդ շրջանին վարժարանը ունեցած է 10 շրջանաւարտ, որոնք բոլորն ալ իրենց մասնագիտական ուսումը շարունակած են մայր հայրենիքի թէ՛ Փարիզի բարձրագոյն կրթական հաստատութիւններէն ներս:

Գալուստեան թէ՛ Նուպարեան Վարժարաններէն ներս իր երկարամեայ տնօրէնութեան ընթացքին Տիգրան Պապիկեան անընդհատ դասաւանդած է գիտութիւն, ուսողութիւն, ֆրանսերէն լեզու, հոգեբանութիւն, հայերէն եւ այլն:

Միեւնոյն ժամանակ քաջալերած է իր աշխատակիցները՝ Լեւոն Աճէմեան, Առաքել Տրդատեան, Բենիամին Թաշեան, դասագիրքեր պատրաստելու: Ինք եւս պատրաստած է գիտութեան, թուաբանութեան եւ աշխարհագրութեան դասագիրքեր նախակրթարանի դասարաններուն համար:

1956-ին յետոյ վարժարանին ուսումնական ծրագիրը կը պատշաճեցուի պետական ծրագիրներուն:

Վարժարանի աշակերտութեան թիւը հասած էր 800-ի իսկ ուսուցչական անձնակազմն ալ՝ 53-ի:

Գալուստեան Վարժարանի իր տնօրէնութեան շրջանին է որ վարժարանը օժտուած է ներկայանալի հանդիսասրահով մը, Շրջանաւարտից Միութեան օժանդակութեամբ, գիտական աշխատանոցով մը արդիական կահաւորումով մատենադարանով մը Էվէրէկի Մեսրոպեան Կրթասիրաց Միութեան օժանդակութեամբ, հանդիսասրահի, ճաշարանի եւ յաւելեալ դասարաններու զոյգ շէնքերով - Շուպրայի բաժնին մէջ, Մէօթմէտեանի բարերարութեամբ, 3 նոր օթոպիւսներով եւ միքրոպասով մը:

Նոյնպէս այդ շրջանին է որ մեծ շուքով կատարուած են վարժարանին 100-ամեակի հանդիսութիւնները 1954-55, ինչպէս նաեւ վաստակաւոր ուսուցչուհի Տիկին Զարուհի Ծաղկունիի յոբելեանը:

1947-1966 շրջանին 10 քննական ճամբորդութիւններ կը կազմակերպէ դէպի Լուքսոր եւ Ասուան, մասնակցութեամբ շուրջ 700 աշակերտներու եւ ծնողներու:

1961 Սեպտեմբերին Տիգրան Պապիկեան կը նշանակուի Տնօրէն Նուպարեան Վարժարանին, պաշտօն, որ կը վարէ մինչեւ անցեալ դպրոցական տարեշրջանի վերջաւորութիւնը, այսինքն լման 12 տարի, երբ երկրին կրթական օրէնքներուն պարտադրանքով, Ազգային Իշխանութիւնը ակամայ զինք հանգստեան կոչելու պարտաւորուեցաւ: Հոն եւս կը շարունակէ կրթական եւ դաստիարակչական իր անխոնջ գործունէութիւնը վարժարանը հասցնելով փայլուն դիրքերու: Կը բարեկարգէ մատենադարանը, գիտական աշխատանոցը, իր շրջանին կը տօնուի վաստակաւոր ուսուցչուհի Օրիորդ Արշալոյս Շահրոզեանի յոբելեանը:

Անկախաբար մեր զոյգ կրթական յարկերէն ներս ստանձնած պատասխանատու պաշտօններէն, Տիգրան Պապիկեան իր սուղ ժամանակները սիրայօժար կերպով կը տրամադրէ կրթական եւ մշակութային զանազան կազմակերպութիւններէ ներս տարուած

օգտակար աշխատանքներու, ինչպէս՝ Ուսումնական Խորհուրդին, որուն կազմութեան առաջին շրջանէն մինչեւ ներկայ թուականը մաս կազմած է անոր եւ իր կարեւոր բաժինը բերած է եգիպտահայ վարժարաններէն ներս կատարուած ուսումնական գործունէութեան յարատեւ վերելքին եւ արդիականացումին ի նպաստ:

Ան 1943-էն մինչեւ այսօր մասնաւոր հոգածութեամբ կը մասնակցի Եղիայեան Սանուց Յանձնախումբին օգտաշատ աշխատանքներուն, սկիզբը իբրեւ ատենադպիր, իսկ վերջերս ալ իբրեւ ատենապետ իր հայրական խրատներով առաջնորդելով ուսումնատենչ բազմահարիւր պատանիներու քայլերը դէպի երկրորդական եւ համալսարանական ուսում:

Նման կրթական աշխատանքի մը լծուած է նաեւ ՀԲԸՄ-էն ներս, որուն Եգիպտոսի Կեդրոնական Յանձնաժողովի ատենադպիրն է 1964-էն ի վեր, ուր պատրաստած է Յովակիմեան ուսանողական ֆոնտի կանոնագրութիւնը եւ ստանձնած անոր գործադրութիւնը:

1967-71 շրջանին եղած է Գահիրէի Թեմական ժողովի անդամ ու իր կրթական եւ բազմակողմանի փորձառութիւնը սպասս դրած է ազգային գործերուն:

Եգիպտահայ գաղութի վերջին տասնամեակներուն պատմական յիշատակելի բազմաթիւ առիթներով Տիգրան Պապիկեան միշտ հրաւիրուած է խօսք առնելու հրապարակաւ: Ան կատարած է նաեւ բազմաթիւ դասախօսութիւններ Եգիպտահայ մշակութային սրահներէն ներս ազգային, կրթական եւ գիտական նիւթերու մասին:

Տիար Տիգրան Պապիկեան ալ, ուրիշներուն նման, ներքին անհուն գոհունակութեան եւ գերագոյն ապրումներու անասելի պահեր վայելած է 1969-ին հայրենի կառավարութեան հրաւերով իր քառասնօրեայ Հայաստան կեցութեան ընթացքին, ուր հանդիպումներ ունեցած է ըլլայ իր նախկին աշակերտներուն, ըլլայ կրթական պատասխանատուներուն հետ, հոն խօսած է փարաւոնեան քաղաքակրթութեան մասին:

1973-ին այցելած է Գանատա եւ հանդիպած իր նախկին աշակերտներուն եւ գործակիցներուն: Մոնթրէալի Ռատիոկայանէն ուղղած է իր խօսքը գանատահայ նոր սերունդին:

Անջնջելի է Տիար Տիգրան Պապիկեանի թողած դրոշմը իր հասցուցած սերունդներուն վրայէն: Իր նախկին աշակերտներէն հասած բազմաթիւ նամակներէն պիտի թուեմ հատուածներ՝ մին դրկուած հեռաւոր Ամերիկայէն, միւսը մայր հայրեիքէն, երկուքն ալ այժմ գիտական բարձր տիտղոսներու արժանացած անձնաւորութիւններէ: «Մտքիս ու յիշողութեանս մէջ տակաւին թարմ են ձեր տուած գիտութեան պահերը Քալուստանի մէջ: Որքան հետաքրքրութեամբ ու լարուած մտիկ կ'ընէինք զանոնք: Ես տակաւին չեմ տեսած ու չեմ ունեցած գիտութեան ուսուցիչ մը ինչպէս նաեւ տնօրէն մը, որ դասին հետ մէկտեղ ջամբէր հայրական գուրգուրանք իր աշակերտներուն հանդէպ»:

«Մեր մանուկ կեանքից, ամէն մի թել գալիս կապուեմ է ձեզ եւ որքան էլ աշխատես՝ չես կարող պոկել: Հայրենադարձ շատ Քալուստեանցիներ հասած են նախանձելի դրութիւնների եւ ես հպարտութեամբ նայելով նրանց, մտածում եմ որ այդ տղաներին դաստիարակել են համեստ եւ առանց անունների մնացած եւ գաղութում թաքնուած Պապիկեաններ, Քրիստեաններ, Քամէլ էֆէնտիներ, Տրդատեաններ»:

Ահա այս եւ նման զգացումներով լի խանդավառ նամակներով է որ կը դիմաւորեն իր յոբելեանը, աշխարհով ցրուած իր բոլոր նախկին աշակերտները:

Սիրելի Պր. Պապիկեան, ձեր բոլոր հին եւ նոր Եգիպտոսի, հայրենիքի թէ արտասահմանի տարածքին ցրուած աշակերտներուն, ինչպէս նաեւ Քահիրէի Ազգային Իշխանութեան անունով կ'ողջունեմ ձեզ ձեր քառասնամեայ կրթական գործունէութեան յոբելինական տօնախմբութեան բացման հանդիսաւոր այս պահուն, մաղթելով ձեզի առողջ, արեւշատ եւ երջանիկ օրեր եւ նորանոր յաջողութիւններ ձեր ապագայի ազգօգուտ բոլոր գործունէութիւններուն մէջ:

«Արեւ» օրաթերթ, 16 Մայիս 1974

**ՊԱՏԿԱՌԵԼԻ ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱՊԵՏ՝
ԱՐԹՕ ՊԸԼԸՔՏԱՆՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ
ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՅՈՔԵԼԵԱՐ՝
ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆԻ**

Գերապատիւ Տեղապահ Հայր,
Հոգեշնորհ Հայրեր,
Յարգելի Յոքելեար,
Արժանապատիւ Քահանայ Հայր,
Յարգարժան Երեսփոխաններ Եգիպտահայոց զոյգ Ազգային
Իշխանութեանց,
Սիրելի Հանդիսականներ,

Այսօր մեր յոբելինական հանդիսութեան որ նախաձեռնուած ու կազմակերպուած է Գահիրէի Ազգային Իշխանութեան կողմէ, եկած ու հաւաքուած ենք հոս՝ բոլորս՝ իւրաքանչիւրս՝ մեր սրտագին երախտագիտութեան ու արժանի յարգանքի ու գնահատանքի տուրքը մատուցանելու, խնդակից ըլլալու՝ կրթական մշակի մը, դաստիարակի մը, մեր հարազատ ընտանիքին մէկ անդամին կարծես, որ 40 տարիներ շարունակ, խոնարհաբար, առանց ցոյցի, աղմուկի կամ շեփոհումի, անընդհատ, յարատեւ եւ անվճար, իր բոլոր ուժերովը՝ եւ կարողութիւններովը, ամբողջ սրտովը եւ հոգիովը՝ միշտ առաջ է նետուեր, առաջնորդեր, աշխատեր, տքներ, նուիրուեր ու զոհաբերուեր է, մեր գաղութէն ներս, որպէսզի հայու զաւակներ, իրենց մատղաշ տարիքէն իսկ, սնանին հայ դպրոցին անեղծ սնունդով, կոփուին, յղկուին, զարգանան, աճին ու զօրեղանան հայու հարազատ աւիշով, ու ապա աստիճանաբար աւելի ճանչնալով իրենց ազգը, սկսին գիտակցօրէն հպարտանալ եւ հետզհետէ ամբողջովին համակուիլ ջերմ հայրենասիրութեան ու ազգասիրութեան հուրով, մինչ իրենց ականջին ու սրտին մէջ միշտ պիտի հնչեն կոմիտասեան երգերն ու Հայաստանեայց Եկեղեցւոյ շարականներն ու կոչնականերուն ղօղանջները:

Եւ ասիկա սերունդ սերունդի ետեւէ, ծայրէն սկսելով, ամէն տարի, ամէն ինչ, անհուն համբերութեամբ, հանդուրժողականութեամբ եւ սիրով, տոկալով, մարտնչելով, յամառելով, խոչընդոտներ

յաղթահարելով, բայց միշտ յառաջանալով, որպէսզի հայ դպրոցը, ամէն տարի, կրկին եւ կրկին կենսանորոգ, հասնի իր գերագոյն նպատակին, իր իտէալին:

Եւ ինք, դպրոցին տնօրէնը, զերթ զօրավար, շուրջը հաւաքած ուսուցիչ ուսուցչուհիներու իր սպայակոյտը, ամէն վերամուտի, իւրաքանչիւր տարի, դպրոցին շեմին կանգնած, յուզումով եւ հրճուանքով ընդունած է իր աշակերտները, տեսակ մը որդեգիր զաւակներու հայ բանակ մը, զոր պիտի մարզէ ու վստահ առաջնորդէ դէպի ազգին լուսաւէտ ապագան:

Այս եղած է կեանքը մեր այսօրուան յարգելի յոբելեարին, մեր ամէնուս ծանօթ ու սիրելի Պրն. Տիգրան Պապիկեանին: Այսպէսով ան արժէքաւորած ու իմաստաւորած է ոչ միայն իր՝ այլ նաեւ հազարաւոր աշակերտներու կեանքը: Ան դարձած է այսպէսով աշակերտներու բանակի հայր մը: Պէտք է տեսնել իր խորունկ հրճուանքը եւ հաղորդական յուզումը երբ հին աշակերտէ մը՝ կը ստանայ նամակ մը, ուր լուրերու եւ անձնական յաջողութիւններու կողքին կայ միշտ սէրն ու երախտագիտութիւնը, հանդէպ նախկին տնօրէնին:

Քառասուն տարիներու այս որքան երկարատեւ նուիրում, որքան անսպառ համբերութիւն եւ որքան օրինակելի վսեմ զոհաբերութիւն: Հոս ունինք ճշմարիտ օրինակ մը կոչումի, վեհ առաքելութեան մը եւ իրական ազգասիրութեան: Հոս կը տեսնենք բացարձակ գերադասումը ազգային եւ ոգեկան արժէքներու՝ ամէն բանէ վեր, ըլլան անոնք նիւթական, առողջական եւ կամ անձնական, եւ երբ կ'ուզենք մարդը ճանչնալ եւ կամ ճշգրտօրէն դատել մարդկային աստիճանաչափով, այն ատեն պէտք է միշտ նկատի առնենք՝ առարկայօրէն կշռելով ամէն ինչ, իր երկարատեւ գործունէութեան ու նուիրումին վերջնական ու պատկառելի արդիւնքը:

Գիտէ՞ք ինչ բան մոռցնել կու տայ այսքան աշխատանքի յոգնութիւն, ի՞նչ բան որ հիմն է մեր յոբելեարին կեանքին երջանկութեան: Ասիկա նախ այն հաճելի զգացումն է, զոր մարդ ներքուստ կ'ունենայ, երբ իր կեանքին համար ընտրած կ'ըլլայ իր իսկ սիրած ասպարէզը: Եւ երբ տարիներու թաւալումը կու գայ կը հաստատէ իր մէջ, թէ ասպարէզի իր ընտրութիւնը եղած է ճիշդ, այն

ատեն՝ այդ ներքին գոհունակութեան կու գայ կը միանայ ինքնավստահութեան, տեսակ մը ապահովութեան զգացում, ձեր ներաշխարհը կարծէք կը թափանցուի հանդարտութեամբ եւ խաղաղութեամբ:

Եւ ապա, երբ կը տեսնէք ու կը հաստատէք որ ձեր ճիգերն եւ զրկանքները տուեր են իրենց արդար պտուղը, հասցուցեր էք ճշմարիտ Հայ դպրոցականներ, որոնք կեանքի ասպարէզին մէջ ալ, հոս կամ այլուր, իրենց սատարը կը բերեն հայութեան, հայ մշայոյթին, ազգապահպանումին եւ հայրենիքին, այն ատեն հասկնալի կը դառնայ յարգելի յոբելեարին խնդութիւնը, ուրախութիւնը, հոգեկան խաղաղ գոհունակութիւնը: Այլեւս կը մոռցուի ամէն ինչ, ամէն յոգնութիւն, ինչպէս քանդակագործ մը, որ կը մոռնայ անտաշ քար մը կերտելու, կոփելու, տաշելու, յղկելու իր երկարատեւ յոգնութիւնները ի տես վեջացուցած իր գործին յաջողութեան, հարազատութեան, ազնուութեան: Այս ներքին ուրախութիւնն է իր գերագոյն վարձատրութիւնը:

Ամէն անհատի չէ տրուած իր սիրած, իր կոչումին համապատասխանող կեանքի ասպարէզ մը ընտրելը եւ պահելը, ասիկա բախտաւորութիւն է եւ յարատեւութեան ապացոյց: Ամէն ոքի չէ տրուած, իր կեանքին մէջ ձեռք բերել, մեր յոբելեարին նման, նախանձելի, ազգօգուտ վաստակ մը, թէ որակով թէ քանակով: Եւ ինչ որ մեր Ազգային Իշխանութիւնը հաճոյքով հաստատեց մեր յոբելեարին մօտ, այն է թէ անկախաբար իր ակնյայտ արժէքներէն, կարողութիւններէն ու ձեռք բերած շատ գովելի արդիւնքներէն, մեր յոբելեարը միշտ ցուցաբերեց անկեղծ եւ օրինակելի գործակցութեան մը ոգին, ի շահ մեր դպրոցին եւ գաղութին: Ան եղաւ Գահիրէի ներկայ Ազգային Իշխանութեան երեսփոխան, այսպէսով կրկին օգտակար հանդիսանալով գաղութին:

Իր այս ձեռք բերած շնորհակալ արդիւնքները երբ կը յիշենք, չենք կրնար մոռնալ որ իր ազնուաշուք կողակիցը, Տիկին Պապիկեանը, միշտ զօրավիգ, համբերող, խրախուսող ու քաջալեր հանդիսացած է իր ամուսնոյն ասպարէզին, գիտակցօրէն գնահատելով հայ դպրոցին արժէքը, անհրաժեշտութիւնը եւ հետապնդած վսեմ նպատակը:

Յանուն Գահիրէի Ազգային Իշխանութեան, որուն համար՝ ինչպէս նաեւ մեր գաղութին՝ բախտաւորութիւն մը եղաւ, ի վերջոյ եւ անկասկածօրէն երկարատեւ ունենալ մեր այսօրուան յոբելեարին նման արժէքաւոր եւ նուիրեալ դպրոցական Տնօրէն մը, կու գամ Ազգային Իշխանութեան, գաղութին եւ իր հազարաւոր աշակերտներուն ծայնով եւ ծափողջոյններով, միասնաբար եւ միաձայն, յայտնել մեր սրտագին շնորհաւորութիւնները ու շնորհակալիքը, մեր ուրախութիւնը այսօրուան հանդիսութեան առթիւ, ինչպէս նաեւ մեր անկեղծ, հարազատ եւ անմոռանալի երախտիքը իր անձնուրաց, երկարատեւ ու ազգասէր նուիրումին համար:

Սրտանց կը մաղթենք իրեն՝ ընտանեկան երջանկութիւն, առողջութիւն, երկար կեանք եւ յաջողութիւն:

Ինք անուրանալիօրէն եղաւ, մեր գաղութին համար, ազգօգուտ եզրիպտահայ մը:

«Արեւ» օրաթերթ, 17 Մայիս 1974

**ԱՂԵՔՍԱՆՂՐԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ ԵՐԵՍՓՈՒՍԱՆ
ՄՈՒՐԱՏ ՔԵՕՇԿԵՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ
ՏԻԳՐԱՆ ՊԱՊԻԿԵԱՆԻ
ՅՈՐԵԼԵԱՆԻՆ ԱՌԻԹՈՎ**

Գերապատիւ Տեղապահ Հայր Սուրբ,
Արժանապատիւ Հայրեր,
Ազգային Իշխանութեան Յարգելի Անդամներ,
Յարգարժան Յորելեար եւ
Սիրելի Հայրենակիցներ

Աղեքսանդրիոյ Ազգային Իշխանութիւնը անհուն ուրախութեամբ կը մասնակցի այս փառաւոր հանդիսութեան՝ նուիրուած վաստակաւոր հայ մշակի մը, որ իր ամբողջ կեանքը ի սպաս դրաւ հայ մատղաշ սերունդներուն, որպէսզի անոնք աճին հայկականութեամբ, որպէսզի անոնք դիմագրաւեն կեանքի ասպարէզը՝ օժտուած հայու առաքինութիւններով, հայու հանճարեղ հնարամտութեամբ, հայու դաստիարակութեամբ եւ շարունակեն ապրիլ ազգապահպանման այն ոգիով, որ մեր պապերը մեզի աւանդած են սկսեալ Հայկ Նահապետէն, մինչեւ Սուրբ Մեսրոպ, Քաջն Վարդանէն մինչեւ մեր օրերը, երբ մեր Հայրենիքը հասած է մշակոյթի գերաստիճան մակարդակի մը:

Ազգի մը բարձրութեան չափանիշը իր մշակոյթն է: Հայ ժողովուրդը միշտ մասնաւոր կարեւորութիւն ընծայած է մտքի գանձերուն:

Մեր պատմութեան ամենէն դժբախտ օրերուն իսկ Հայ մշակոյթի նուիրեալ անձեր, փայլուն աստղերու նման բաժրացած են մեր սեւ օրերու երկնակամարը եւ ժողովուրդը առաջնորդած են մշակոյթի եւ հաւատքի ուղիով ազգապահպանման ապահով նաւահանգիստը:

Մայր հայրենիքը մոխիրներու եւ աւերակներու մէջէն հագիւ վերածնած, մեր պետական մարմինները հացին եւ ջուրին չափ

կարելուորութիւն ընծայեցին մեր մշակոյթին եւ ծնունդ տուին Երեւանի համալսարանին, ուր պատրաստուեցան այսօրուան մեր հայրենիքի պարծանքը եղող մշակոյթի հերոսները:

Այսօր մեր հայրենիքի ժողովուրդը ամբողջութեամբ գրագէտ է: Իսկ մնայուն ուսանողներու թիւը կը համեմատի մէկ երրորդով ամբողջ ժողովուրդին:

Եթէ մեր հայրենիքը այսօր իր որակով, իր արդիւնաբերութեամբ իր գիտութեան մակարդակով երրորդ տեղը կը գրաւէ Խորհրդային Միութեան 15 հանրապետութիւններուն մէջ, ասիկա կը պարտինք մեր հայկական մշակոյթին, մեր համալսարանին եւ մեր ուսուցիչներուն:

Ուսուցչական ասպարէզը սիրելիներ, ինչպէս հայ հոգեւորականին ասպարէզը, վեհ կոչում մըն է: Հաւատքի հարց է: Այս ասպարէզը ընդգրկողը իր անձը պիտի զոհաբերէ մշակոյթի խորանին: Պիտի չմտածէ դրամ շահելու, դիրք շինելու մասին, այլ պիտի մտածէ հայ մանուկին մտքին մէջ դրոշմելու մշակոյթի գանձերը: Պիտի մտածէ որ հայ մանուկին դաստիարակութեամբ ինք ճարտար որմնադիրի մը նման, աղիւս առ աղիւս պիտի բարձրացնէ հայ յաւերժականութեան հաստատուն կառոյցը:

Ահա այնպիսի ուսուցիչ մը եղաւ Յոբելեարը՝ Պր. Տիգրան Պապիկեանը: Ան իր բարձրագոյն ուսումը առնելէ վերջ Ֆրանսայի մէջ, փոխանակ իր անձնական նիւթական շահերը մտածելու եւ օտար շրջանակի մէջ դրամ շահելու, վերադարձաւ Գահիրէ եւ կեանքը նուիրեց այս գաղութին անանձնական սիրով:

Իրմով դաստիարակուեցան սերունդներ, որոնք այսօր թէ՛ հայրենիքի եւ թէ՛ սփիւռքի մէջ, իրենց գործօն դերը կը կատարեն վառ պահելով հայկականութեան ջահը:

Այս քառասուն տարիներու արդիւնաբեր աշխատանքէն վերջ եկած է օրը որ Ազգային Իշխանութիւնները իրենց համակրութիւնը եւ գնահատանքը արտայայտեն:

Այսօր երբ անդրադարձ մը կ'ունենանք անոր ուսուցչական շրջանին, կը մտածենք թէ՛ որքան յարատւօրէն աշխատեցաւ

յոզնեցաւ համբերեց եւ ինչքան զոհողութիւններ ըրաւ տեսնելու համար իր աշակերտներուն յաջողութիւնները:

Գահիրէի Ազգային Իշխանութեան կազմակերպած այս գեղեցիկ յոբելինական հանդիսութիւնը ցոյց կու տայ թէ որքան սիրելի է անոր կատարած գործը եւ իրեն հետ միասին որքան ի պատուի է հայ մշակին, հայ դաստիարակին վսեմ աշխատանքը:

Թէեւ կարելի չէ որեւէ ձեւով հատուցանել Պր. Պապիկեանի անձնուէր աշխատանքը, սակայն կը խորհինք թէ այս հանդիսութիւնը լաւագոյն վարձատրութիւնն է հայ հասարակական արժանաւոր գործիչի մը:

Աղեքսանդրիան ալ կը միանայ Գահիրէի Ազգային Իշխանութեան շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն յայտնելու համար յարգելի յոբելեար Պր. Տիգրան Պապիկեանին:

Կեցցէ՛ Հայ Ուսուցիչը, Կեցցէ՛ Յոբելեարը:

«Արեւ» օրաթերթ, 20 Մայիս 1974

շարունակութիւն էջ 50-էն

Մանուկեան, Գալուստեանի նախկին տնօրէն եւ ՀԲԸՄ-ի նախկին ընդհանուր տնօրէն Տիար Գրիգոր Կիրակոսեան, որ յրբեւեարին ալ ուսուցիչը եղած է:

Ստացուած էին բազմաթիւ շնորհաւորական նամակներ մշակութային միութիւններէ եւ անհատներէ, ինչպէս նաեւ բազմաթիւ հեռագիրներ: Ծաղկեկողովներ ղրկած էին Գալուստեան Ազգային Վարժարանը, Հայ Ազգային Հիմնադրամի Կեդրոնական Վարիչ Մարմինը: Հայ Գեղարուեստասիրաց Միութեան, Կոկանեան Սրահի Վարչութիւնները, ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Կեդրոնական Յանձնաժողովը, Սրբուհի Թերեզա ակումբը: Յրբեւեարին յուշանուէրներ յանձնուեցան Գահիրէի Ազգային Իշխանութեան կողմէ ձեռամբ Տիար Արթուր Պըլըքտանեանի, Աղեքսանդրիոյ Ազգային Իշխանութեան կողմէ ձեռամբ Տիար Նազարէթ Մարկոսեանի, փոքրիկն Սիւզիկ Յակոբեան եւս իր ծնողքին՝ Տէր եւ Տիկին Յ. Յակոբեանի կողմէ յուշանուէր մը յանձնեց:

Հանդիսութիւնը վերջ գտաւ Գերապատիւ Հայր Սուրբին կողմէ արտասանուած պահպանիչով:

Ներկաները ցրուեցան Յրբեւեար Տիար Տիգրան Պապիկեանն ու իր ազնիւ կողակիցը շնորհաւորելէ ետք:

*Կարապետ Տէմիրճեան
«Արեւ» օրաթերթ, 15 Մայիս 1974*

ملحق دورية « ديغيجادو » التي تصدرها جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة
رقم ٨٠ يوليو ٢٠١٦

دكران بابيجيان
المربّي والناظر

Սոյն գրքոյկին տպագրութիւնը հովանաւորած են Տէր եւ Տիկին Պերճ եւ Սեդա Թէրզեանները

